

ՆՈՐ ԿԵԱՆՔ

ՀԱՆԴԻՍ ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ

Զ Ի Ն Ա Դ Ա Դ Ա Ր

Քանի մը ամսուան մէջ Կ. Պոլսէն երեք պատուիրակ Երոպա եկան հայ յեղափոխականներու հետ բանակցութեան կէս-պաշտօնական առաջելութեամբ: Կ. Պոլսոյ մեծ-շարքէն ետքն էր որ օսմանեան իշխանութիւնը հայ Յեղափոխութեան վարիչներուն հետ համաձայնութեան մը փորձերը մտաբերեց. թիւրքիոյ արտաքին զործերու իորհրդական Տատեան Արթին փաշայի սրբին Տիրան պէյ 1896 հոկտեմբերին «հօրը կողմէն» Բարիզ, Լոնտոն, ժընէվ հովուեց. այդ թուականէն ի վեր նմանօրինակ այցելութիւնները կը կրկնուին:

Ազգային քաղաքական ուղղութեան ծրագիրներու յօրինումին պահուն մեր ուշադրութենէն պէտք չէ վրիպի յեղափոխութեան եղած այս դիմումը: Հայկական խնդրին սպառնալից օրերը, 1895ի վերջին քառօրէն առաջ, Դուռը հարկ շտեաւ Յեղափոխութեան զեկամարներուն հետ յարաբերութեան մասնէլ. պատրիարքարանին կողմէն մուղտըղին ուղղուած յորդորականները բաւական սեպուեցան: Եւ ոսկայն այդ թուականին հայ ազգն ու թիւրք իշխանութիւնը միեւնոյն առուելութիւններով նպասաւորեալ կոտաններու վրայ կանգնած չէին մարտնչեր. մեր դիրքը ամուր, թշնամիինը խախուտ կ'երեւնար: Հայ ազգը զօրավիզ ունենալով յեղափոխական ուժը, ու Եւրոպայի վրայ յուսադիր, յաղթանակ կ'ակնկալէր արդարութեան պատին համար. Դուռը իր բարոյական ու նիւթական տկարութեան դիտակցութեամբը տաքնապալից կը մտար: Հայ ազգն ու օսմանեան կառավարութիւնը իրենց գրաւած դիրքերէն տեղափոխուած նկատուեցան յետոյ, արիւնթաթախ հայ ազգը քրիստոսազօր կայսրերու ոտնակոխ եղած, ու թիւրք վարչութիւնը անոնց թեւերուն վրայ վերամբարձ: Ու ահա հիմա թիւրքիա, երբ ամենազօրութեան համբաւ կը վայելէ, տրամադիր կ'երեւնայ ընել այն որմէ խրաչած էր իր տկարութեան ժամանակամիջոցին: Այս երեւոյթը պէտք չէ հպարտութեան արբեցութեամբը զգլիւ մեզի, եւ ոչ ալ արգիլէ կացութեան ճշգրիտ ծանօթութիւնը ըմբռնել: Ծայրայեղ անմտութիւն է կարծել թէ օսմանեան իշխանութիւնը արդէն սարսափահար է հայ մողտըղէն. միւս կողմէն՝ թիւրքիոյ արդի կացութիւնը ու-

շաղիւր չգիտողները միայն կրնան այնպէս ենթադրել թէ Հայ մողտըղը արհամարհելի քանակութիւն մըն է, եւ թէ Պոլիս կառավարական շրջանակներու մէջ Հայ ազգին հետ մերձեցումի ո՛ր եւ է զազափար չի կրնար թափանցել, ուստի եւ այս պատուիրակութիւններն ալ ո՛ր եւ է նշանակութենէ զուրկ, պարզապէս զրամաշարթական հնարած մտութիւններու ծնունդ են: Ժողովրդի մը համար սրբան վտանգաւոր է իր փափաքները իրականութեան տեղ առնել, նոյնքան ալ վտանգաւոր է աչքերը խփել չլիտելու համար իրեն նպաստաւոր հանդամանքները: Չանանք կացութեան վրայ ճիշդ զազափար կազմելու նիւթերը փնտռել:

* * *

Ֆրանսացի պետական անձնաւորութեան մը երբեմն իր թագաւորին ըրած այն յայտարարութիւնը թէ «Տէր արքայ, ասիկա ոճիւրէ աւելի մեծ բան մըն է, սխալ մըն է», կատարելապէս կը յարմարի 1895-96ի օսմանեան քաղաքականութեան: Հայկական կոտորածները ու անոնց բնկերացող թալանները ոճրագործութեան սահմաններէն անդին անցնելով պատմութեան արձանագրած քաղաքական մեծ սխալներուն շարքը կը դասուին: Եղեռնագործութեան ամբաստանութեան տակ ո՛չ պետական անձնաւորութիւնները կը կործանին, ո՛չ ալ ազգութիւնները կը տկարանան. ոճրագործութիւնը, իրաւ կամ յանիրաւի, քաղաքական յաջողութիւններու պայմաններէն մէկը նրկատուած է. քաղաքական սխալն է որ պետական անձնաւորութիւնները կը սպաննէ ու կայսրութիւնները կը սարսէ: Իր հիմնարկութեան թուականէն ի վեր օսմանեան կայսրութեան էն մեծ եւ էն աղիտաբեր սխալներէն մէկը հայաշարք քաղաքականութիւնը եղաւ. հետեւանքները մէկ օրէն միւր աչքի չզարկին, բայց հետզհետէ տեսնուեցաւ թէ պետութեան հիմերը, որոնք արդէն շատ ամուր չէին, բոլորովին խախտուեր են:

Ո՛ր եւ է կառավարութիւն չի կրնար, առանց ծանր պատուհասի ենթարկուելու, խանգարել երկրին կեանքը վարել, ի վեր ապահովող տնտեսական պայմանները: Հրեաներու արտաքսումը Սպանիայէն ահեղ հարուածը տուաւ այդ երկրին բարեբաւութեանը: Ֆրանսայի 38 միլիոն մողտըղին մէջ միայն 60,000 հրեայ կը գտնուին. ասոնց կոտորածը կամ յանկարծական տարագրութիւնը տակնուվրայ պիտի ընէ Ֆրանսայի անտեսական կազմակերպութիւնը

որ թրքականն այլապէս ամբակուտ է: Ու մենք ալ թիւրքիոյ մէջ այլապէս կարեւոր ենք քան թէ Հրեաները Ֆրանսայի մէջ: Երկրին բնիկներն ենք, հողատէրը, վաճառականը, երկրագործը, արհեստաւորը, մտաւորականը: Խալաւթեան կրօնական, զինուորական եւ քաղաքական պահանջումներուն հետեւանքով Փոքր-Ասիոյ անտեսական դրութիւնը հզօրապէս կախում ունի Հայերէն որոնց կարծանումը բնականաբար պիտի կարծանէր նաեւ ամբողջ երկրին անտեսական դրութիւնը: Խալաւթեան արդէն իրենք ալ հասկցեր են թէ Կ. Պոլսոյ կեդրոնական իշխանութեան սխալը սրչափ մեծ եղաւ. ու կը գոչեն. «Ինչ եղանք, ու զեւ ինչ պիտի ըլլանք առանց Հայերուն:»

Միւս կողմէն, թիւրքիոյ համար Եւրոպայէն վախցուած վտանգը միշտ սպառնալից է. կառավարութիւնները քաղաքական հիմնաւոր կամ անհիմն նկատումներով ներդրած միտ զանուեցան օսմանեան իշխանութեան, բայց եւ այնպէս Եւրոպայի ու Ամերիկայի հանրային զգացումը հիմա խորապէս կ'աւել թիւրքական կայսրութիւնը, ու երբ առիթը ներկայանայ՝ քրիստոնեայ ազգերը միաձայնութեամբ թիւրքիոյ վերջնական ջախջախումը պիտի պահանջեն. մեր արիւնքը ամէնուն խղճին վրայ ծանրացած է, ու այդ խիղճը թեթեւցնելու «խոստովանանքը» օր մը չէ օր մը պիտի ընեն: Սեպտեմբեր 1830ին երբ Պոլիս երկու հարիւրի չափ հայ կոտորուեցան, պատրիարքարան հաւաքուած խելայեղ եկեղեցականներն մէկը կը պոսար պատրիարքին. «Սրբազան, ս'ըր են զեպանները. Տաճիկները երբ վան կատու մը սատկեցնէին զեպանները ամենքը մէկտեղ կը վազէին կուզային իմանալու թէ ինչ եղած է. հիմա, արիւնք կը վնջէ, ս'ըր են:» Այո՛, այնպէս է, քաղաքաժողովուրդեան համար վնաս կատուի մը սատակումը երբեմն կրնայ աւելի կարեւորութիւն ունենալ քան թէ բիւրուսար քրիստոնեաներու ջարդը. սակայն տարակոյս չի կայ թէ հայկական կոտորածները պահեստի դրամազուռն են զիւանդիտութեան գանձարանին մէջ, եւ ծր մը պիտի շահնագործուին ի մեզս թիւրքիոյ: Դուրը լաւ զիտէ թէ հայկական կոտորածները ամէնէն աւելի քաջալերող կառավարութիւնը՝ թիւրք պետութեան դէմ հատու զենքերը Հայուն ոսկորներէն պատրաստեց:

Այս անձուկ էջերուն մէջ հնարաւոր չէ, եւ մեր նախագծէն ալ դուրս է, ընդարձակօրէն նկարարել այն բոլոր շարիքները զոր 1895-96ի պատահարները բարդեցին օսմանեան պետութեան գլուխը: Այսքան յիշատակութիւն մը այս տեսութեան առեջնորդելու համար միայն առաջ բերինք:

Ու Հայ ազգն ալ կ'ապրի: Վիրաւորուած հակառակորդը որ կ'առողջանայ՝ չափազանց վտանգաւոր է անոր սր զայն սպաննել ուզած էր: Վրէժխնդրութիւնը հրաբորբոք կը վառի Հայուն որտի՛ն խորը. ու այդ սուրբ հուրը կը պահպանէ հայ ազգութիւնը եւ անոր վերածնութիւնը կ'երաշխայօրէ: Եւ մեծ, ազգային եւ ոչ կուսակցական Յեղափոխութեան թուականը նոր պիտի բացուի. նշանները չեն կրնար թրքական աչքերուն անտես մնալ:

Դուրը շատնց է որ նկատողութեան առած Բհայկական պատահարներն թիւրքիոյ համար ստեղծուած այս վիճակը. օսմանցի նախարարները կը կարծեն թէ հայ ազգը

սիրաշահելու քաղաքականութիւն մը թերեւս մինչեւ աստիճան մը, զոնէ առ այժմ, դարձանէ 95-96ի հետեւանքները: Այդ նախարարներէն ոմանք անցած տարի սատրազամ Խալիլ Ռիֆաթ փաշայի առաջնորդութեամբ յաջողեցան հաճեցնել սուլթանը Հայոց նպատակաւ խորհուրդներու գործադրութեան: Երազիւներ պատրաստուեցան եւ անոնց գործադրութեանը համար կուսակալներուն սրոշ, բացարձակ եւ խիստ հրահանգներ կը խրմբագրուէին երբ 1897 օգոստոսի մանր դէպքերը պատահեցան. սուլթանը իր տրամադրութիւնները փոխեց եւ հայահալած քաղաքականութիւնը շարունակուեցաւ անընդհատ: Այս առթիւ սատրազամ անկեղծ ցաւով իրեն ծանօթ Հայերէն ոմանց յայտարարեց հետեւեալը. «Թէ՛ ձեզի ըրիք թէ՛ մեզի:» Այդ «թէ՛ մեզի ըրիք»ը ամբողջ յայտնութիւն մըն է որ երեւան կը բերէ թիւրքիոյ պաշտօնական շրջանակներու մասհուլութիւնը, եւ միանպատակ յուսախաբութիւնը: Այո՛ յուսախաբութիւնը, վտանգի Հայոց վիճակին բարւոքումին մէջ մեզի չափ, ու թերեւս մենէ ալ աւելի, երկրին իշխանները եւ օսմանեան իշխանութիւնը պիտի օգտուին:

Այդ դէպքերը սակայն ծրածորուած նոր ուղղութիւնը շնչել տալու ձգտի կարեւորութիւն չունին: Հին քաղաքականութենէ աստիճանաբար հեռանալու պէտքը երբ կը զգացուէր՝ հարկ էր նաեւ նոյնխառտեմէլ ինքնանցումով պահուն աւելի կամ քուսակ ծանրակշիւ շարիւղներու հաւանականութիւնն ալ, մանաւանդ որ հայ ժողովուրդը անտեղեակ կը մնար Գրան ձգտումներուն: Փոփոխութեան այս դիրքութիւնը ցոյց կուտայ թէ զեւ անցած տարի բարեկարգութիւններու կարեւորութիւնը հարկ եղած լրջութեամբ չէր զգացուած տակաւին:

Թէ՛ այս պարագան, թէ՛ ուրիշ տեղեկութիւններ, թէ՛ անուղղակի պատուիրակութեան Եւրոպա Յամանումը կը հաստատեն այն կարծիքը թէ թիւրքիոյ բարձրագոյն իշխանութիւնը անորոշ կացութեան մասնուած է բարեկարգութիւններու խնդրին առթիւ: Կը զնայ թէ ինչե՞նչութիւն չէ մտնալ հայ ժողովուրդին վիճակը բարեփոխելու մեծ խնդիրը, բայց միանգամայն փութալու պէտքն ալ չի դրար: Ուրիշ բացատրութիւններով չենք կրնար պատկերացնել օսմանեան իշխանութեան եւ հայ ազգին փոխադարձ յարաբերութիւններու արդի վիճակը:

Ու այս ամէն տեսութիւններէն՝ ետքը, վերջնական հարցումը որ կը ներկայանայ ամէնուն մտքին սա է թէ օսմանեան իշխանութեան ու հայ ազգին միջեւ համաձայնութեան մը հաւանականութիւնը կարելի է մտաբերել եւ թէ լուրջ առաջարկութեան մը պահուն ինչ կրնայ ըլլալ յեղափոխականներու արամադրութիւնը:

Եթէ օսմանեան իշխանութիւնը առանց կըքի, առանց կանխակալ կարծիքի, առանց շուարումի, պաղարիւն հանգրտութեամբ զիտած, քննած, իմաստասիրած ըլլար Հայոց Կ. Պոլսոյ ազգային յեղափոխական շարժումները

իրենց զանազան երեսյթներուն մէջ, պիտի անդրադառնար թէ հայ ժողովուրդը կը հպատակի լայն զգացումներուն որոնք պարտաւորիչ պէտք է համարուին միայն անկախութիւն վայելող ազգերուն: Հայ ժողովուրդը իր պատգամները պիտի ստանձնէ իր օրինաւոր, արիւղիկ և անվիճելի կրօնականներուն պաշտպանութիւնը, շնորհակցութեամբ օտար պետութիւններու ոտնձգութիւնը հրաւիրել հայ ազգին եւ օսմանեան իշխանութեան միջեւ: Ինչպէս ար ֆրանսիացի ժողովուրդը եր դանդաղաներուն պարմանը միայն իր կառավարութեան կը պահանջէ առանց գերմանացին կամ իտալացին քննութեան ֆրանսիայէն, նոյն ընթացքին հետեւեցաւ եւ Հայ ժողովուրդը հանդէպ օսմանեան իշխանութեան: Հայոց յեղափոխական շարժումը «մենք մեզի» սկզբունքին վրայ հիմնուեցաւ:

Այդ ազգային շարժումը կը սկսի յուլիս 1858ին: Գումրակի ցոյցը իր արտաքին պատեաններէն մերկացնելով երբ քուն էութեանը մէջ բնակը կը գտնուի թէ օսմանեան ազգային ինքնակիրութիւնը չէր կրնար վերադարձուիլ: Այդ օրը Հայ ժողովուրդը ուզեց անաշտորքուելով պատերազմէն զիմէ ուղղակի երկրին վեհապետին հարդ մը խնդիրներու կարգադրութեանը համար ինչ որ հայրենաւոր եղբորացի մը կ'ընէ իր խորհրդարանին և իր մասունքին մէջ նոյնը Հայը բրաւ եկեղեցին եւ վարձքը, օսմական վարչական գրութեամբ, ի շնորհ սորհրդարանի եւ մաքուութի: Թուրքի բեկանուածք եւ սքիշ վեճակներ զեպէ ուսմանին, «հայրենի» արդուզարդը եղան: բայց շարժումին էութիւնը «օրինական» էր, ու կրնար համապատասխանել երգչական ըմբռնումի համեմատ հայրենասիրական գաղափարին:

Ազգեան խորէն պատրիարքին եւ Մագուստ Սիմոն պէյին տապալումը նմանապէս ցոյց կուտար թէ Հայ ժողովուրդը ուղղակի օսմանեան իշխանութեան հետ օրինական միջոցներով կը ցանկար իր խնդիրները կարգադրել: Պատրիարքարանը հայ ազգին եւ Դրան միջնորդն է: Գում-Գարու աւելի խելացի եւ միմեկնամայն ուղղամիտ պաշտօնատարներ զնենալը պահանջումը կը հաստատէ թէ Դրան հետ հաշտ երթալու հակամիտութիւնը միշտ կը արտապետուի: Իզմիրեան պատրիարքը Հայ ազգին տիրացած բազմազարեան իրաւունքներուն, պետութեան օրէնքներուն վրայ կ'ընելով ուղղակի երկրին բարձրագոյն իշխանութեան ներկայացուց ճիշտական պահանջումներու ցուցակ մը: Եւ եթէ 1858ին երթալական տէրութիւնները ուզեցին իրենք ստանձնել Հայոց վիճակը բարուքելու խնդիրը, ո'չ Հայոց պատրիարքարանը, ո'չ հայ յեղափոխութիւնը այդ օրինակ միջամտութեան մը հրաւերը խրկած կ'էն իրենց: Սասունի անսպասելի եւ անարդարանալի շարժն կը որ Եւրոպայի խիղճը վրդոված կը:

Եմանակէ «տեղական զոյն» ունի գեպարտներ 1830ը: Հայ ժողովուրդը նոյն օրն ալ զեպտանատունները շնորհ, այլ ուղղակի օսմանեան իշխանութեան կեդրոնը զիմէ: Իրաւ է որ սեպտեմբեր 1830ի պահանջադրը յուլիս 185ի բզրոքազրէն շատ աւելի լայն շրջա-

նակով հիմնական բարեկարգութիւններու պէտքը կը զգացնէր եւրոպական երաշխաւորութեամբ, բայց պէտք չէ մղուիլ թէ Դուրը հինգ տարի շարունակ ո'չ միայն Հայոց պաշար պահանջումներէն զ'չ մէկուն պահանջում տուած էր, այլ եւ պաշտօնական հանրատուարութիւնները սաստիակացնելով Սասունի շարքը անոնց իբր զեթնագոյն յնաւերացում Եւրոպայի ու վեր մերեւին նետած էր: Բնականաբար Հայերն ալ ի տես այդ յամառ հակահայ քաղնք քահանութեան հեղհետէ պիտի յուսահատէին ուղղակի օսմանեան կառավարութեանն ո' եւ է զոհնացում սպանելու իրենց յամառութեանէն: բայց և այնպէս սեպտեմբեր 1830ին ազգային բողոքաբնութեան շեշտը տակաւին օտարու ձայն չէ:

Քառսրդ դարու միջոց մը իրարմէ կը թնժնէ Հայնեւասանի բարենորոգումներն և նոսալին ազգային ծրագիրը վերջին ազգային ծրագրէն: Խորմեանի պատրիարքութեանն էր, 1870ին, որ կ' Պոլսոյ Հայոց երեսփոխանական մարմնով Հայպատանի հարստահարութիւններու խնդիրը մղուցային ընդհանուր քաղնքականութեան բարձրացուց, ու Հայ ժողովուրդին ստառապանքներուն պարմանը Դրան ներկայեց բարեկարգութիւններու համետ ծրագրով մը վերջին ազգային ծրագիրը 1895 Վեպտեմբեր 1830ին Հայ ժողովուրդը ինք իր ճեղքովը ներկայեց Դրան: Բնան եւ հինգ տարուան մէջ հայտնաւած քաղնքականութեանն ուստիւցումին աստիճանը ահնբերեւ կը տնտնուի երկու ծրագիրներուն տարբերութեանը միջեւ: Ինչ որ 1870ին երեսփոխանական մարմինը ձեր կարող մտաբերել իսկ, 1895ին շատ բնական պահանջում կ'երեւնար: Չայրացած հիւանդութեան զէմ գորտարագոյն զեղերն: պէտք կը քաղնքուէր:

Սակայն ծրագիրները եւ թէ իրենց սրբաւարութիւնը ներով իրծրմէ շատ կը զանազանին բայց քաղնքական վիճակն: սուղութեան բնական ծնունդն էր, միեւնոյն ձգտումներով, ու միեւնոյն ընդունելութիւնը որ գտան: Երկու ծրագիրներն ալ հաւասարապէս մերժուեցան Դրան: Ո'չ որ 1850ի ազգային ժողովականներէն կը մասնակցել 1895ի ազգային ժողովրդական շարժումին, ո'չ որ Դրան 1870ի նախարարներէն զոյգութիւն մը 1895ին, եւ սակայն երկու կողմէն ալ անայլապէս շարունակութիւն 1870ի ճամբուն: մենէ պահանջում, Դրան մերժում: Ո'չ անձնատուութիւններն են խնդրին տէրը, ո'չ անձնատուութիւններն են մերժումին պատասխանատուները: Երկու կողմէն ալ Ազգային Ոգին է, Ազգային Քաղնքականութիւնն է որ անբեւութացեալներու գերեզմաններուն վրայ յէն կը շարունակեն Ոչնչացումի եւ ինքնապաշտպանութեան հինգարեան աննամարտը: Ու երբ կը ներկայանայ հարձցումը՝ «Հնարաւոր է համաձայնութիւն մը թուրքական իշխանութեան եւ Հայ յեղափոխութեան միջեւ» զոյգ տասնամը ինքնիրենը կուգայ: Պիտի շարունակութեան զոյգումի քաղնքականութիւնը:

Ազգային զոյգութեան, այսինքն ամէն Հայ անհատի նիւթական ու բարոյական կեանքի եւ մահէ պատերազմն է որ կը մղուի: Ինչ որ ալ ըլլան մեր ուղեագիտական որ-

խաղները, ներքին հերձուածները, օտար պետութիւններու մեքենայութիւնները, ամենքն ալ երկրորդական պարագաներ են. միջանկեալ դէպքեր, դրուագներ որ չեն կրնար հայեւթիւրք պատերազմին էութիւնը այլափոխել: Այդ պատերազմը այն ատեն միայն կրնայ վերջանալ երբ մեր ոչնչացումին հետապնդող իշխանութիւնը կը հրաժարի իր խորհուրդներէն, որուն առհաստուցեայն կրնայ ըլլալ բարեկարգ վարչութեան մը հաստատութիւնը, զոնէ հնարաւորութեան սահմաններուն մէջ: Երբ օսմանեան կառավարութիւնը իր ճշմարիտ շահերը ըմբռնէ տարակոյս չի կայ թէ համաձայնութիւնը շատ կը դիւրանայ: Պատուիրակութիւններու, թէեւ ոչ պաշտօնական, առաջուժը, կարգ մը վարչական տնօրինութիւններ ինչպէս են զաղթականներու վերադարձին քիչ շատ դիւրացում, մաս մը բանտարկեալներու արձակում, Մերսինի ձերբակալեալներուն ազատութիւնը, կրնան առ այժմ կառավարական աւելի խելացի մտածութիւններուն նշանները համարուիլ, բայց նոյնպէս կարելի է նաեւ մեզի խաբելու, ժամանակ շահելու վարպետութիւններ կասկածիլ: Առ այժմ ո՛չ իրաւունք ունինք այսպիսի կասկած մը անսխալական համարելու, եւ ո՛չ ալ ներելի է մեզի վստահօրէն հաւատալ Դրան անկեղծութեանը. կը բաւէ իրողութիւնները միայն տեսնել, արձանագրել եւ սպասել: Ուրեմն ինչ որ մենք այժմ կրնանք ընել զինադադար է, քանի որ օսմանեան իշխանութիւնն ալ զինադադարի նշանը կուտայ:

Ետքը՝

«Ետքը» կախում ունի օսմանեան կառավարութեան խելացի կամ անխելք քաղաքականութենէն: Իմաստուն ուղղութեան մը հետեւելով Դուռը եթէ զինադադարին պայմանաժամը երկարել ուզէ, կը դիւրացնէ զինադադարէ զինադադար մինչեւ վերջնական համաձայնութեան ժամանումը: Իսկ եթէ խաբեպատիր քաղաքականութեամբ մեզի ծուղակ լարելու վարպետութիւնը մտաբերուի, ա՛լ վերջնապէս անհնարին կը դառնայ ո՛ր եւ է համաձայնութեան հաւանականութիւն, ու ազգային կոիւր կը շարունակուի: Ու պէտք չէ տարակուսել թէ վերջնական յաղթանակը թիւրքիոյ իշխանութեան չի մնար:

Իրենց ինքնապահպանութեանը համար մղած կոիւնքներուն մէջ հալածեալ ազգութիւնները կը յաղթանակեն. ու հիմա Հայ ժողովուրդը իր փորձառութիւններովը զիտէ թէ ինչպէս պէտք է ընթանայ, եւ ո՛ր պէտք է դիմէ:



Կ'երեւայ թէ այս տեսակ խորհուրդներ կ'. Պոլսոյ Հայ շրջանակներու մտածութեան առարկան եղած են: Բարիգի «Արմէնի»ին կը հաղորդեն Պոլսէն. «Հայկական շրջանակներու մէջ կը խորհուր թէ Գում-Գարուի պատրիարքարանէն պաշտօնապէս խրկուած պատգամաւորութիւն մը միայն պիտի կրնայ օգնակարապէս բանակցել «Եւրոպա աշխատող Հայրենասէրներուն հետ: Թիւրք պատուիրակներէ կասկածանքը հայկական իմաստութեան սկզբնաւորութիւնն է:»

Այս տեսակ խորհուրդ յղացողները շատ կը սխալին. խորհող ու գործող Յեղափոխութիւնը պատրիարքարանին հետ ո՛ր եւ է յարաբերութիւն չի կրնար ունենալ բարեկարգութիւններու խնդրին առթիւ: Հայոց պատրիարքարանը օսմանեան կառավարութեան ներկայացուցիչը չէ, եւ յանուն երկրին իշխանութեան խօսելու ո՛ր եւ է հանգամանքը զուրկ է: Հայոց պատրիարքը մինչեւ հիմա իր ո՛ր պահանջումին համար զոհացում ստացաւ որ վստահօրէնք ելլէ իր վրան առնէ «Եւրոպա աշխատող Հայրենասէրներու» պահանջութիւններու զոհացումին պատասխանատուութիւնն ալ:

Նաեւ, իսլամ ներկայացուցիչ մը շատ աւելի կարելորութիւն կրնայ ունենալ քան թէ Հայ պաշտօնեայ մը: Իսլամը երբ խելացի, հայրենասէր եւ պատուաճանաչ ուղղամիտ անձնաւորութիւն մըն է կարող է Հայոց վստահութիւն ներշնչել. բայց որ աւելին է իր կառավարութեան մօտ առանց կասկածանքի, հեղինակութեամբ կրնայ խօսիլ, եւ լսած դառնազան ճշմարտութիւնները աներկիւզ պարզել իր կառավարութեան, քանի որ ինքը իսլամ է եւ բարձրագոյն իշխանութեան աչքին կասկածելի չէ:

Եթէ իրաւցնէ Պոլիս թէ՛ Հայ եւ թէ՛ Թիւրք շրջանակներուն մէջ լրջօրէն փափաք կայ արդի վտանգաւոր կազմութիւնը հետզհետէ բարեփոխելու, այս նպատակաւ բանակցութիւն մը շատ աւելի արդիւնաւոր ըլլալու հաւանականութիւն կ'ընծայէ երբ յանձնուի իսլամի մը — բաւական է որ խելացի եւ պատուաւոր անձ ըլլայ — քան թէ ո՛ր եւ է Հայու որ միշտ թէ՛ իր ազգին եւ թէ՛ Դրան կասկածելի ըլլալու վախին մէջն է:

Գոնէ այս պարագային հայամուտութիւնը «սկիզբն իմաստութեան» չէ:

ԱՐՓԻԱՐ ԱՐՓԻԱՐԵԱՆ

Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն

ԻՐ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ, ԻՐ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ,
ԻՐ ԴԵՐԸ ԱՐԵՒԵԼՔԻ ՄԷՋ

Դ.

ՀԱՅՈՑ ՆՈՐ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

ԼԵՒ
ՀԱՅԿԱԿԱՆ ԽՆԴԻՐԸ

ԺԵ. դարէն սկսեալ, ուր Հայ ժողովուրդը զերջնապէս կորնցուց անկախութեան վերջին հատուածը զոր ունէր Կիլիկիոյ մէջ, Հայերը, ամէն կողմէ կարուած այն ընդարձակ երկրէն՝ որ բաժնուեցաւ Պարսկաստանի եւ Տաճկաստանի միջեւ, եւ որուն մէկ մասը հուսկ ապառուական տիրապետութեան տակ պիտի անցնէր, բարոյական եւ մտաւորական խորին անհասցման մը մէջ սուգ-

ուեցան: Որովհետեւ մահմեդական իշխանութիւնները թրիտոնեաներուն կ'արգիլէին բանակը մտնել, զէնքի վարժութիւնը կորսնցուցին և իրենց ուժերը քիչ քիչ թուցան: Քրիստոնեայ կրօնամտութիւնը որով թաթաւուած էին, և որ պայքարի օրերուն մղիչ ուժ մը եղած էր, հիմա զիրենց սովորեցուց ցաւագին համակերպութեան մը: Եւ, բացի քանի մը լեոնական գաւառներէ՝ ինչպէս Սասունի եւ Ձէյթունի կողմերը, ուր ցեղը միշտ իր պատերազմիկ յատկութիւնները պահեց, Հայերը ստանձնեցին, մանաւանդ թիւրքիոյ մէջ ուր լուծը աւելի ծանր եւ միջավայրն աւելի թաթաւացի էր, աշխատող ու հլու ժողովրդի վիճակ մը: Գրեթէ կատարեալ սարկութեան տխուր շրջան մըն է: Եւ սրտայոյզ երեւոյթ մը եղաւ երեք գարու թմբակահարն ուսուցումէն յետոյ՝ այս ժողովրդին յեղակարծ ու տենդոտ զարթնումը:

Քուն մըն էր լուկ: Քաղաքական իշխանութիւնը կորսուած, զինուորական ուժը շնչուած էր, բայց ուժ մը կը մնար, Եկեղեցին: Անիկա պահած էր իր զօրութիւնն ու հրապոյրը. անցեալին յիշատակները անոր յարած կը մնային, փառաւոր անուններ հոն կը հնչէին եւ նախահայրերու լեզուն շարականներու վեհափառութեանը մէջ իր հնչական ծիրանին կը տարածէր: Սրբազան կապն եղաւ որ իրենց երկրին եւ ամբողջ աշխարհի մէջ ցրուած Հայերը կը միացնէր. ժողովուրդը զայն պահպանեց զորովով, անոր համար ամէն տառապանք յանձն առաւ, հակառակ հանգստութեան եւ զօրութեան փորձութեանց զոր իրեն կ'ընծայէր մահմեդականութեան յարումը: Եւ անիկա եւ զաւ միանգամայն ազգին մտաւորական կեանքին ապաստանարանը: Վանքերու խորը կը քնանային հին ձեռագիրները, անցեալին յուշերովն ու երբեմնի մտածումովը բնականոր, սպասելով խուզարկու ձեռքերուն եւ իրենց գեղնած էջերուն մէջ կրելով վերակենդանացման սերմերը:

Սրբաստացի վանական մը եղաւ այս գործը սկսողը: Մխիթար կը կոչուէր, եւ այս անունը թուական մը կը բանայ Հայոց նոր պատմութեան մէջ: Ասիկա հասկցած էր թէ մտաւորական շարժում մը միայն կրնար ազգը վերհանել իր բարոյական անկումէն, եւ որովհետեւ անհնար էր վերածնութեան վառարան մը հիմնել թիւրքիոյ մէջ ուր բոնաւորական կառավարութիւն մը կը տիրէր, որոշեց զայն հաստատել Երրոպայի մէջ, ուրից պիտի ճառագայթէր ոչ միայն Հայաստան գտնուող, այլ ամբողջ աշխարհի մէջ ցանուցիւր Հայերուն վրայ: Գնաց նախ Յունաստան, յետոյ Իտալիա, հետը տանելով ձեռագիրներու խոշոր ծրար մը, եւ հիմնեց Վենետիկի Մխիթարեան վանքը:

Քիչ հաստատութիւն այնքան արգիւնաւոր ծառայութիւններ մատուցած է ժողովրդի մը: Վանքը եղաւ տպարան մը, գլխոց մը եւ ակադեմիա մը: Ամէն կողմէ, Հայ երիտասարդներ գացին խմբուիլ այս նոր կեդրոնին շուրջը: Խուզարկութեանց եւ ուսումնասիրութեանց մեծ աշխատութիւն մը սկսաւ: Միաբանութիւնը ձեռնարկեց ձեռագիրները վերծանել, անուններ գտաւ, թուականներ որոշեց, պատմութիւն մը եւ գրականութիւն մը երեւան հանեց: Սկսաւ

տպագրել Հայ դասականներուն շարքը եւ սարածեց վանքը, քննական ուսումնասիրութիւններով ընկերացած, ամբողջ ազգին մէջ:

Հայ ժողովրդին ճանչցնելու ատեն իր անցեալին գանձերը, Վենետիկի ակադեմիան այլապէս կարելուր ծառայութիւն մը կը մատուցանէր ազգին: Հայկական գործերու թարգմանութիւններով եւ ուսումնասիրութիւններով, Հայաստանը ծանօթացուց Երրոպային, եւ անոր է որ կը պարտինք երուպայի հայագէտներու երեւումը, որոնք արեւմտեան գիտութեան լոյսերը բերին Հայ լեզուին ու պատմութեան քննումին: Ունեցաւ հոշակաւոր անգամներ եւ մեծանուն հիւրեր. լորտ Պայրն, Յունաստանի համար մեռնիլ մտածելէ առաջ, քմայքն ունեցաւ տարի մը Վենետիկ անցընելու որպէս զի հայերէն սորվի եւ Մխիթարեաններուն հետ Հայաստանի վրայ խօսի:

Բայց ամէնէն կարելուր ծառայութիւնը զոր Վենետիկի վանքը մատուց Հայ ժողովրդին, զարմանեցն է զաւ այն ծանր սխալը զոր Հայաստանի նախկին հեղինակները միշտ գործած էին եկեղեցական գրականութեան մը շրջանակին մէջ սահմանափակուելով: Մխիթարեանները ուզեցին լայնցնել Հայ գրականութեան սրբոտը: Գեղարուեստով ու պատմական յիշատակներով սոգորուած իտալական հոլին վրայ, հասկցած էին այն մեծ բարոյական ուժը որ կը գտնուի աշխարհական բանաստեղծութեան, ազատ արուեստին, գեղեցիկն ամէն ձեւով արտայայտութեան մէջ: Սկսան թարգմանել Հոմերի, Վիրգիլի, Միլտոնի քերթուածները, Հերոդոտոսի, Թուկիդիտէսի, Քսենոփոնի, Պլուտարքոսի, Դեմոսթէնէսի, Տակիտոսի զրքերը և Պայրնի, Շիլլերի, Ալֆիէրիի, Գոսսէյլի, Ռասինի, Տանդէի, Դաստոյի գործեր: Այս առնական բանաստեղծութիւնը, համակ գիւցագնութիւն ու գեղեցկութիւն, անոր ծանօթացող նոր սերունդին յայտնեց մարդկային կորովին մեծութիւնը եւ գեղեցկագիտական յղացումներուն բարձրագոյն հրապոյրը:

Մխիթարեաններուն ամէնէն երեւելիներէն մէկը, Հայր Չամչեան, հին ձեռագիրներէն քաղելով, յօրինեց մեծ ու ամբողջական Հայոց Պատմութիւն մը: Արտէն Բագրատունի, Հոմերոս, Վիրգիլիս, Սոփոկլէս եւ Միլտոն թարգմանելէ յետոյ, ուզեց Հայ գրականութիւնը օժտել ազգային գիւցագնեղութեամբ մը, եւ գրեց Հայ կը, ուր, դասական մեծ գիւցագնեղութեանց նմանողութիւններով, երգեց՝ պերճաշուք ոճով մը՝ Հայաստանի Հօր պայքարը առաջին Բոնաւորին դէմ: Աւելի ինքնուրոյն բանաստեղծ մը, Հայր Ղեւոնդ Ալիշան, տաք արձակով ու թըրթոռն ոտանաւորներով փառաւորեց գիւցագնական յիշատակներն ու սիրազորական աւանդութիւններն Հայոց պատմութեան, եւ հրատարակեց քանի մը ընդարձակ տեղագրական և պատմական ուսումնասիրութիւններ Հայաստանի գլխաւոր գաւառներուն վրայ:

Շարժումը ընդարձակեցաւ: Մխիթարեաններուն մէկ մասը գնաց հաստատուիլ Վիէննա, ուր հիմնուեցաւ երկրորդ վանք մը որ ուրիշ վառարան մը դարձաւ Հայկական ուսումնասիրութեանց, աւելի մասնաւորապէս ազգային լեզուին եւ պատմութեան գիտական քննութեանը յատ-

կացուած: Այն աշակերտները որ վենետիկի Միխիթարեան գարոցէն ելան, Կ. Պոլսի գոցին եւ հոն մտաւարդական եւ ազգային մեծ գործունէութիւն մը սկսան: Եւրոպայի մէջ ուղեւորելի ոգւոյն տիրապետման ատենն էր. եւ բոլոր այդ ներկայարդները, ազնւամեծն մտածմամբը լեցնուած, զեղեցիկ եւ վեհանձն գազափարսերուն հաճար զեղուն խանդով մը բորբոքած Լիւն Միսնզամայն այնպէս սի ատեն մըն էր որ բարի եւ թոյլ տէլ լիմանսկը գտնուելով Պոլսոյ գահին վրայ, գրաքննութիւնը գոյութիւն չուէնէր, եւ Գրեթէ լիալիր ազատութիւն կար զործելով՝ անոնց համար որ կ'ուզէին բարի խօսքը բնորոշել Հայ ժողովրդին:

Կ. Պոլսոյ Հայ հասարակութիւնը, որ թիւրքիոյ Հայոց մտաւորապէս ամէնէն զարգացած մասը կը ներկայացնէր, արդէն պատրաստ էր այս զեղեցիկագիտական եւ ազգային մեծ դաստիարակութիւնն ընդունելու: Այս խաւարի եւ ստորկութեան երեք գարեբուն մէջ, Հայը, Պոլսի եւ նոյն իսկ գաւառները, թէեւ տիրող տարրէն ճզմուած եւ արհամարհուած, յաջողք էր Պայտրութեան մէջ զիրք մը շինել իրեն. ձեռքն առած էր մաճառականութիւնը, գրամական գործառնութիւնները, եւ ինչ նր թիւրքիոյ մէջ գոյութիւն ունեցած է իբր արուեստագործութիւն, եւ մանաւանդ եղանակ էր գլխաւոր տարրը որ քիչ մը արուեստ ու բանաստեղծութիւն էր դրած՝ այդ տարամեղծութիւն պայտրագմական շինուածքին մէջ ողջ էր գտնանան պետութիւնը. Հայը երգիչ ու նրաժիշտ էր զաւ. թիւրքիոյ ամէնէն երեսելի հազարէնէն եւ ներք մատակարարած է, եւ ինքն իր գրեթէ ըստ տեղած է ինչ որ թրքական երաժշտութիւն կ'ըստի գեթ բառան եղած է, եւ հայերէն թատրերգութիւնները ներկայացնելէ առաջ, երկայն ատեն թիւրք զաւելտը խաղացած է. ճարտարապետ եւ արչներդի գործատու եղած է Կ. Պոլսոյ զխաւոր պալատներն ու մզկիթները յատակագծուած են հայ ճարտարապետներէ եւ հայ բանտրներու ձեռքով շինուած: Այս աշխատասեր, արուեստի եւ բանաստեղծութեան սիրահար ժողովուրդը բոլորովին պատրաստ էր ուրեմն դիտակից եւ իւր զարգացում մը ընդունելու: Իրեն կը պահէր միայն անկախութեան զգացումը եւ կիանքի աւելի ազատ յղացում մը:

Այն շարժումը որուն ծնունդ տուին Եւրոպայէ գարձող երկտասարդները՝ ժողովրդին թմրած հողիին մէջ խրոխտութիւն արթնցուց: Այնպէն գրականութիւնը՝ որ կը կազմակերպուէր՝ անոր միայն ու նկարագիրը վերանորոգեց: Եւ այս շարժումը շատ արագ տարածուեցաւ ժողովրդին մէջ անոր համար որ հազարիչները կը սկսէին իբր զրական լեզու գործածել նոր հայերէնը, փոխանակ հին հայերէնին որ մինչեւ այն ատենը կը շարժածուէր: Միւթարեանց աշակերտ մը, Երեւնց, յորինեց վէպեր Հայաստանի հին պատմութեանն բազում, եւ լեցուն՝ առողջ ու յանդուգն քննական ոգիով մը որ արդէն նոր հեռանկարներ Պը բանար ազգին առջեւ: Նախկին Միւթարեան մը, Խորէն Նալբանդեան, որ իր Բարիկ Նախկինութեանը միջոցին նպատի ունեցաւ բարեկամ ըլլալու Հիւսիսի եւ Լամարգիսի, թարգմանեց այս վերջ-

նայն Բարեկամ զձեռն զաշխարհիս երբ, հրատարակեց մէկ քանի հատոր բնարեբողական բանաստեղծութիւններ՝ բորբոքեալ հայրենասիրութեամբ մը թրթորուն: Պէշիքթաշեան, նախկին աշակերտ վենետիկ, գրադարձակ հմտութեամբ եւ բոլոր մատենագրութեանց երկայն ստուգասիրութիւններով նրբացած ճաշակով, արտադրեց բերթողական գործ մը ձեւի եւ զգացման խորին փափկութեամբ: Թերզեան հնչեցուց բազմազի բնար մը՝ արեւելեան ներշնչմամբ յղացուած ոչ հետզհետե գեպի նոր ոճերը ձգող բերթուածներու մէջ: Պոլսեցի երկտասարդ բանաստեղծ մը, Գուրեալ, բուն անունը ժողովրդական եղաւ Հայոց մէջ, ցաւի լազ մը թրթորացուց հեռախաւար տաղերով: Քնարեբողական բանաստեղծութեան հետ, թատերական գրականութիւն մըն ալ սկսաւ զարգանալ. նոյն բանաստեղծները հիմնեցին Պոլսի ազգային թատրոն մը որ ներկայացուցին Եւրոպիոյ Երկրորդ Տիւրքի, Հիւսիսի, Ալիէրի, Քոստանյի խաղեր, թարգմանութիւններ եւ ինքնագիր թատերգութիւններ: Հայոց պատմութեան միջ շրջանները պատկերող, գառակական եւ բոմանդիկ բանաձեւներուն համեմատ յորինուած Ժողովուրդը մեծ խանգալաւորութեամբ բաշխեց այս թատերական շարժումը որ ոչ միայն իրեն կը բերէր բարոյական հզօր դաստիարակութիւն մը, այլ որ զինքը հազարից կ'ընէր արուեստագիտական եւ մատակարար կիանքի մը: Բանի մը տաղանդաւոր հնրամաններ գտնուեցան, եւ նշարիա ինքնուրուծութեամբ քանի մը նկարիչներ ու երաժիշտներ:

Նոյն թուականին, խուր մը խորհուրդներ, մեծ մասամբ Եւրոպայէ կ'ընտրուած, ուսմանդիկ վեհանձն գազափարսերով սկսած, արդէն ձեռնարկած էին Հայ ժողովրդին քաղաքական եւ բազաբացիական պատկարակութեան ճշմոքի: Այն խորհրդը, որոնք մէջ նշանաւոր էին Ոսկանեան, Ուսման, Օսման, Երեւնց եւ արիւններ, կը բաղկանար կրակոտ հողի մը, արդարութեան ճարտարագիտութեան սիրահար անձերէ: Ամենց մեծանք այստեղ իսկ Բարիկ մէջ՝ իրաւած էին 1881 յեղծփոխականներուն հետ, եւ հետեւին վստփորի ստրուկ արիւնքը տարած էին Բարիկի կոչոցին հողին: Գազափարսերու յեղծարարներ ու պայքարողներ եղան: Կործանեցին կէս-աւատական բարքերը որ գեւ կը տիրէին Հայոց մէջ. Նշեցին ամիրաներուն, շրջերուն ու Երեւնցականներուն տիրապետութիւնը, եւ հիմնեցին հայրական Սեւմանագրութիւնը՝ իրենց Եւրոպայ ստրկած ազատական սկզբունքներուն համեմատ Ժողովրդին տուին իր նշանակութեան եւ իր ուժին գիտախոթութիւնը, եւ Ազգային ժողովը որ կազմուեցաւ քանի մը պերճախօս ատենաբաններ արտադրեց:

Այս ազատական շարժումը հետզհետե անեցաւ. հակառակ արեւելեան ոգիով փոսած միջավայրի մը, հայ մտքին եւրոպայումը կատարուեցաւ զարմանալի պրագմութեամբ: Գրականութիւնը բայց առ քայլ հետեւեցաւ Եւրոպայի զեղեցիկագիտական եւ մտաւորական փուլերուն:

Չմիանալ, իսկ մը գրազէտներ, որոնց մէջ զխաւոր տեղ մը կը բռնէր Մամուրեան, մշակեցին պատմա-

կան քննադատութիւնը, քրոնիկը, վեպը, խորագրերն
 Հիւնդի Զամարդի, Էթէթ Միւի, Տիւթա Կօր եւ որդ-
 տոյն, Ունդը՝ Սքոյի, Կէթթէի, Պոյրընի գործեր: Այս
 հրատարակութեանց մէջ, Վիքոր Հիւնդի ի շուտահե-
 րուն թարգմանութիւնը գերազանցօրէն շինիչ Կերպոյնու-
 թիւն մը սննցաւ Հայ ժողովրդին վրայ, եւ Էթէթ Միւի
 թափառական Հրեային թարգմանութիւնը Հայոց
 մէջ եկեղեցական տիրապետութիւնը հզօր պէտ խաբարեց-
 Ազատ Կերպոյնու մամուլ մը փնտռէր, որ, մանաւանդ
 Պոլսոյ մէջ Էթէթի մը պայքարող հրատարակողները կը
 հաշուէր: Բոլոր գրախոս սեպերը մշակուեցան. Օտեանդ
 որ հայ ազգային շարժման առաջին յարուցիչներէն մէկն
 եղաւ, զրնց մտածման բարձրութեամբ ու քննի աղնու-
 թեամբ նշանաւոր էլեր. Պարոնեան, աշխատութեամբ մը,
 Լուկիանոսի, Արիստոփանի եւ Մպլիւրի աշակերտ, երչի-
 ծարանի եւ ծանակողի շատ ինքնատիպ գործ մը արտադ-
 րեց. Տէմիրճիպաշեան, Լէոբարտի, Շոթէնհաւորի եւ
 Պոստէրի զարոցը կազմուած միաք, հայ գրականութեան
 մէջ իմաստասիրական ձգտումներ մտցուց եւ ոճապաշտու-
 թեան հիւանդութիւնը: Քանի մը փայլուն առնաբաններ
 երեւցան ինչպէս Պերպերեան եւ Չերազ, եւ մեծ բանա-
 սէրներ ինչպէս Գարագաշեան եւ Երչիլ Վ. Գուրեան, ո-
 րոնք Հայոց պատմութեան գիտական քննութեամբ զբա-
 ղեցան: Սկսան շահագործուիլ ընկերական խնդիրներու:
 Գրապատուհի մը, տիկին Տիւթա, հրատարակեց Ժուլ-
 Սանի ձեւով վեպեր, որոնց մէջ կնոջ ազատաշրուծի-
 նը կը քարոզէր: Ապստամբ մտքով մարդ մը, ամէն
 պայմանադրութեան եւ ամէն նախապաշարման թշնամի,
 Արիստոփանի, մեծ աշխուժով զարգացուց այս
 ընկերական գրականութիւնը. յուզմամբ ու հեգնութեամբ
 լեցուն բարբերու նկարիչ մը եղաւ, կծու քննադատ մը,
 եւ հայ մտքի կարեւոր լծարձակիչներէն մէկը:

Այս մտաւորական գործունէութիւնը իրեն հետեւանք
 սննցաւ Պոլսոյ մէջ երկրորդական Կրթութեան քանի մը
 դպրոցներու հիմնարկութիւնը եւ դպրոցական գրութեան
 մէջ ընդհանուր բարենորոգում մը: Խումբ մը ուսուցիչ-
 ներ եւ հրատարակողներ ընկերութիւն մը հաստատե-
 ցին կրթութիւն տարածելու համար հայկական դաւանե-
 րուն մէջ: Բազմաթիւ դպրոցներ հիմնուեցան Հայաստա-
 նի իմաստասիրութեան մէջ:

Քաւառները արդէն իրենց ներքին աշխատութիւնը
 սննցած էին, յամր ու թաքուն, բայց միշտ յառաջա-
 դաց: Արտադրած էին բանաստեղծներ ու քանի մը մեծ
 եկեղեցական պերճախօսներ: Տուած էին մեծ գէմք մը,
 Խրիմեան, Հայոց հիմնական կաթողիկոսը, որուն ձայնը
 Հայաստանի յէկ ծայրէն միւսը զանձնուով զանգակ մը
 հնչեցուց եւ որ նկարագրական եւ բանաստեղծական գու-
 ծեր հրատարակեց Հայ երկրին վրայ՝ զմր մանրամասնա-
 բար կը ձանձնար: Տուած էին նաեւ Սրուանձտեանց եւ
 պիմիկոսը, մի հայկական դաւաններուն մէջ հէքեթ-
 ներն ու ժողովրդական երգերը հաւաքելու կարեւոր գործը
 կատարեց: Եոյն իսկ սննցած էին քանի մը պղծիկ գրա-
 կան կերպոյններ, ինչպէս Էջմիածնի հայրապետական

Վերքը, Վանի մէջ Վաշնիս) վերքը, Ինչպէս ու Երու-
 ստիկի Ս. Յակոբայ վերքը, որոնք պատկան, զրս-
 կան եւ կրօնական գրքեր հրատարակած էին: Ասկից զատ,
 գաւառներու հայ ժողովուրդը ունէր ուրիշ պահպանիչ ու-
 մը բարոյական առնականութեան եւ բանաստեղծական
 կենսականութեան. միասին սկսեցին ծանր վերաբ-
 կուին առկ, ժողովուրդը գաշտնի մշակած էր առողջ ու
 աշխա կենսաբի սերմերը. Հին գրականութեան յազմա-
 կան տղոն պետութեան օրերուն, եւ նոյն իսկ երեք դարու
 մտաւորական գիշերին մէջ, միշտ գոյութիւն սննցած էր
 ժողովրդական երչը: Հանրային երչիչները, աշուղները,
 մութիւն մէջ կը շարունակէին հեթանոս բանաստեղծներուն
 գործը: Այլ քնարի եւ փողոցի մարդիկը կենսաբի ծայրիկը
 պահպանած էին միստիքական վարչին ներքեւ, սերը եր-
 գած, մարմինը փառսորած, ծաղիկներուն գեղեցկու-
 թիւնն ու զինիին անուշութիւնը գրուած, արութիւնն եւ
 ուժը պանծացուցած էին: Իրենց խոնարհ երգերուն մէջ
 անշուք գիւցազնութիւններ կը բարբախէին, եւ անծանօթ
 ասպետներու գէմքեր հոն կ'անցնէին ժողովրդական պատ-
 կերներու մէջէն: Չէյթունցի Հայը, յաւիտեանական պա-
 տերազմիկ, սրբի եւ մարտի երգեր հնչեցուցած էր, եւ Սա-
 սունցին, ցեղով անձեռակաւ, Մհեր գիւցազնին վեպը
 ստեղծած էր, այլ հրաշալի կառուղին որ, ամբողջ կենս-
 քը հրէշներուն ու թշնամի ցեղերուն դէմ իր հայրենիքը
 պնդող սննչէ յետոյ, անուշաձայնի հրամանով հողին
 տակ ընկուեցաւ ու հոն կը մնայ, յաւերժապէս կենդանի,
 սպասելով նախասահմանեալ վայրկեանին՝ ելլելու եւ իր ժո-
 ղովուրդը փրկելու համար: Ազատութեան ծուկները կը
 մնային ուրեքն ժողովրդին մտքի մէջ. Կինչպէս
 պողպատ մը զոր բրտօրէն կորացուցած էին, այլ ժող-
 վուրդը, որ բոլոր ճնշութեանն տակ իր գիմացկուն եւ
 ազատութեան անօթի հոգին պահած էր, վեր ցառեց
 ազատաշրուծեան ոչիին առաջին շունչն զգալուն: Խեղա-
 յեղ խանդավառութեամբ՝ հայկական դաւանները ընդ-
 նեցան քաղաքակրթութեան նոր եւ զօրեղ օրնութիւնը
 զոր Կ. Պոլսոյ հայութեան մտանող ընտրելամար կը
 զրկէր իրենց: Երիտասարդութիւն մը սկսաւ կազմուիլ,
 բարայական գաստիարակութեամբ մը որ յստակօրէն
 տարբեր էր նախկին սերունդներուն սննցածէն: Աւելի
 լաւ կը ձանձնար Հայաստանի անցեալը, եւ զազափար ու-
 նէր նոր աշխարհին ազատական սկզբունքներուն վրայ:
 Ինքզինքը զգաց ուշիմ, ու կարող՝ բարձրագոյն ազատ
 կենսաբի մը. եւ գիտ սկիցաբար տառապեցաւ տեսնելով որ
 կը կաշկանդուէր իր վեպի կենսաբ սլացքին մէջ բարբարոս
 կառավարութեան մը եւ ստորին, մակարոյժ եւ աւարաու-
 ցեղերէ: Ուղեց ապրիլ եւ զարգանալ ամենայն ազատու-
 թեամբ: Բողոքեց զինքը հարստահարող եւ շահագործող
 անարար կառավարութեան եւ Քիւրտին արիւնոտաբար
 յուսորութեան դէմ: Իր բողոքը հասաւ մինչեւ Պոլիս: Եւ
 որովհետեւ Եւրոպայ արդէն զբաղած էր նոյն լուծին տակ
 շարժարուղ ուրիշ քրիստոնեայ ժողովուրդներու վիճակովը,
 Պոլսոյ Հայերը զազափարն սննցան իրենց Հայաստանի
 ազգակիցներուն գանգաւանները Եւրոպայի ներկայացնելու:

Ներքև պատրիարքը պատգամաւորութիւն մը զրկեց Պերլինի վեհաժողովին: Այսպէսով ծնաւ « Հայկական խնդիրը »: Պերլինի վեհաժողովին մէջ Եւրոպա խոստացաւ պարտաւորել թիւրք կառավարութիւնը որ թիւրքիոյ Հայոց ապահովութիւնը երաշխաւորէ: Խոստումը ապարդիւն մնաց: Թիւրք կառավարութիւնը ոչ մէկ բարենորոգում գործադրեց. ընդհակառակն, Եւրոպայի զիմելու յանդէմնութեանը համար՝ Հայերուն դէմ զայրացած, հալածանքները սաստկացուց: Եւ ահա Պոլսոյ գահը բարձրացաւ այն հիւանդ գիշակերը որուն կայսերական յիմարութիւնը Հայաստանի վրայէն ահաւոր արիւնահեղեղ մը պիտի անցընէր: Չարշարանքի դրութիւնը սկսաւ: Համիա Հայոց զարթումին մէջ վտանգ տեսած էր. հասկցած էր որ այդ զարթումը մտաւորական շարժման հետեւանքն էր: Իր հրամանովը, հայերէն թատերական ներկայացումները դադրեցան, Հայոց պատմութեան ուսուցումը խստիւ արգիւտեցաւ, հաւատարմական գրաքննութիւն մը մտնուցնուցաւ, այն երգերէն որոնք քանի մը տարի առաջ փոքր զոյնները կ'երգուէին: Գաւառներուն մէջ, հալածանքները բազմապատկուեցան: Համիա իրախուսեց Քիւրտերը՝ Հայերը ջարդելու եւ կողոպտելու, զանոնք պաշտօնապէս զինեց եւ անոնցմէ կազմեց Համիտիէ հեծելազօրքի զուն, զերը: Հազիւ երկայն քունէ մը ելած, իր յոյսի առաջին շարժումին եւ դէպի քաղաքակրթութիւն առաջին խոյանքին մէջ, Հայ ժողովուրդը յանկարծ ինքզինքը կապկուած կը տեսնէր նոր եւ ծանրագոյն շղթաներով: Բայց այնքան հզօրապէս սկսուած մղում մը չէր կրնար մէկ հարուածով կասիլ. կերպարանափոխուեցաւ, զիմախուրուեցաւ: Հայուն ճապուկ միտքը միջոցը գտաւ կապանքին տակ ալ ինքզինքը արտայայտելու. եւ եթէ ասով զօրութեանն ու փայլէն մաս մը կորսնցուց, խորութեանն եւ նրբութեանն տեսակէտով շահեցաւ: Չերմօրէն հայրենասիրական եւ բացէիբաց ազատական գրականութեան մը յաջորդեց սքօղեալ գրականութիւն մը, աւելի ճարտարօրէն զրուած, ընդհանուր մարդկութեան խնդիրներու վրայ թաւալող եւ զեղարուեստական իտէպի մը ձգտող: Այս վերջին գրական շրջանը կրեց ֆրանսական իրապաշտ պարոզին եւ ռուս վիպասաններուն, յետոյ բարիզեան մասնուկն ու Ֆրանսայի նորագոյն բանաստեղծութեան հզօր ազդեցութիւնը: Կորովի հրապարակագիրներ երեւցան ինչպէս Արփիարեան եւ Շահնապար, վիպասաններ եւ նորավիպագիրներ՝ տեղական համուհատով եւ ինքնատիպ գրողով ինչպէս Բաշալեան, Զօհրապ, Սիւսան, Հրանդ, եւ մէկ քանի բանաստեղծներ: Ընդարձակօրէն տեղեակ մամուլ մը կանոնաւորապէս կը ծանօթացնէր Եւրոպայի եւ մասնաւորապէս Ֆրանսայի գրական, թատերական, արուեստագիտական եւ ընկերական շարժումը: Նոր հեղի-

նակներէն շատերուն գործերը թարգմանուեցան: Այս ամբողջը կը կատարուէր վտանգներու եւ ծիծաղաշարժ ու բռնաւորական արգելքներու մէջէն: Գրաքննութիւնը բառեր, նիւթեր, սեռեր կ'արգելէր. վերջ ի վերջոյ ու տանաւ որ գրելը արգիւտեց... Եւ զրեթէ պնդական երեւոյթ մըն է որ հակառակ այս արգելքներուն, այս ջախջախմանց, Հայերը կրցած ըլլան արտադրել այն միակ բանը որ, քանի մը նոր յոյն գրագէտներու գործերուն հետ, կարենայ ճշմարիտ գրականութիւն համարուի՝ այդ անսահման Արեւելեան կայսրութեան մէջ որ ոչ մէկ գրականութիւն սնեցած է թիւրքերուն գալէն ի վեր:

(Շարունակելի) ԱՐՇԱԿ ԶՕՊԱՆԵԱՆ

ՕՐՈՒԱՆ ԿԵԱՆՔԸ

Լոնտոն, 12 յուլիս 98

Արցունք եւ արցունք. — Լուսադարները. — Հայկական ցաւ մը. — Կարօտցողի մը սնարը. — Մազափ շուրջը. — Վանի յիշատակներ. — Աներեւութացեալ մըն ալ:

Երբ Լոնտոն հասայ էն առաջ հեաքերբութեամբ փնտռեցի վեց ամսուան մէջ « Նոր կեանք »ի նամակատակէն ելած ծանօթ ու անծանօթ բարեկամներու դատաստանազրբերը. լուսանկարներ, նորածիլ հանդէսէն հանրային մտքին ու սրտին սպաւորութիւններուն: Մասնաւորապէս երկու տուս, երկուքն ալ « Սկեպտիկ »ի հասցէին, ուշադրութիւնս գրաւեցին: Մէկը Կ'ըսէր՝ « Չէ՛ ներելի չէ այսքան զուարթութիւն. խնդար մեղք է մեզի համար. չի թուցնենք ազգին ջիղերը: » Միւրը՝ « Օ՛հ, քիչ մը աւելի զուարթութիւն տուէք մեզի. ուժ մըն է ժպտիտը որ ջիղերը կ'ամրապնդէ. անընդհատ վիշտը ալ սովորութիւն դառնալով ազգային զայրոյթը կը մեղմանայ: »

Ամիսի մտքով կարգացի այդ վեց ամսուան հաւաքածոն եւ սակայն չի կրցի անդրադառնալ թէ Զուարթութիւնը ճիշդ ո՛ր կը սկսէր, Տիրութիւնը ո՛ր: « Լալն ու խնդարը ազբար են », այս հակիրճ բանաձեւին մէջ շամփոփուի արդեօք մեր կեանքին զաղանիքը: Արցունքի մը էութիւնը ո՛վ պիտի կրնայ երբեք տարրալուծել: Ո՛րն է այն քիմիազէտը որ իր բոլոր հանճարովը կարող պիտի ըլլայ մէկը ուրախութեան, միւսը տրտմութեան արցունքներ պարունակող երկու սրուակ իրարմէ զանազանելու Գիտութիւնը որ մարմինն ներսի ծակափակները գոյց տալու հրաշքը գործեց, ու Մտածութիւնը կը լուսանկարէ, եւ աստղերուն ներքին գաղանիքները կորզելու կը հետամտի, օ՛հ, միշտ անզօր պիտի մնայ երկու կաթիլ արցունք իրարմէ զանազանելու յանդիմութեանը մէջ: Երկուքն ալ

ազի են, արամութեան ալ, ուրախութեան ալ: Ամբողջ մարդկութիւնը այդ երկու կաթիլին մէջ ամփոփուած է:

Ու անոնք որ մենէ տիրութիւն կը պահանջեն, ու անոնք որ զուարթութիւն, ահա իրենց ներկայացնեմ կեանքի զուապ մը, իր բոլոր պարզութեանը մէջ, ու եթէ երբեք աչքերնուն արցունք մը իյնայ՝ թո՛ւզ ըսեն ուրախութեան էր թէ պանծութեան:



Հերու աշնան վերջին օրերը իրիկուն մը արտակարգ իրարանցումի մէջ էր Ալեքսանդրիա: Հայերը հասցնելու կ'երթնեկէին Մէնշան, իրարու ականջէ փսփոտեցով, աչքի խորհրդաւոր բացփակներու ընկերակցութեամբ,

— Եկեր է, ան է:

Իրենց «սրմերուն» մէջ հերոսի մը օ՛հ, վաւերահան հերոսի մը, յանկարծական ժամանուով իրարու կ'աւետէին բնիկ ու եկտրը հայկազանքը՝ ամենքը հիմա մէկ սիրա մէկ հոգի,

Տրտման սեպին եւ լանջը եւ սիրաք,
Խաղաղ արին ի թինզ ի թինզ:

Գալուստ Արխանան էր եկողը, ան որ քիտանքին հետ հարստութիւնն ալ զոհած էր հայրենիքի ազատութեան զազափարին: Հերոսական խուճի մը պէտ՝ Արմատանի լեռներէն կուտած էր թիւրքին դէմ: Հոյք բաշխելն ո՛րը կուտի դաշտին վրայ էր ինկած, ո՛րը լեռնէ լեռ հալածական, ուրիշներ շղթայապիւրկ, սրնոց մէջ եւ Արխանան, հիմա Եղիպտոս ժամանած:

Բերնէ բերան թռչելով ուրախ լուրը նոյն օրը իսկ կը հասնէր Գահիրէ, ուրիշ Պատուելին — այն խեղճ ազնիւ ֆէլէշեանը սրուն մահը անբնական ցաւով ծանուցինք — կ'արտաբայ, կը վազէ կուզայ Ալեքսանդրիա: Կայարանէն հարիւր զուարթ ցատքած, դէմը կլլող հայուն կը հարցնէր զոչոչաքոյ ձայնով.

— Ո՞ր է, ո՞ր է, ո՞ր ի՞նչ է Արխանանը:

— Հոս է, չի՛ փախչիր, բիշ մը շունչ առ, առ ի՛նչ պոյն է, մեղք ես:

«Մե՛ղք էր». օհ, ամէն մէկ ըսողն որ կ'ուշացնէր զինքը Արխանանին պիտի նետուէ՛ր բան մը կը պակտեցնէր իր կեանքէն:

Մէկ հոգի զաւար, մէկ օրսով կուտեր էին Արմատանի լեռներուն վրայ. ձեռք ձեռքի տուած «լուսազբարներ»՝ մէկտեղ վազեր էին համարուելու կրակին լոյսը որ դերեզմանէն հայրենիքի Յարութիւնը պիտի աւետէր: Լոյսը շուտով իր փրկեցմանն էր դարձած նորէն, բայց Ազատութեան ըրիտանոնայ մարտիկները կ'ապրէին ըրիտանոնէն մեծ հաւատքովը.

— Սուրբ լոյսը կ'աներեւութանայ բայց չի խաւարիր կը մանէ շիրիմը ու ամէն տարի աւելի պայծառ ու շողովուն կը վերերելի, յարութեան հաւատքը անմահ պահելով սրտերու մէջ:

Այդ հաւատքովը կ'ապրէին, մէկը՝ բանաբար, միւսը՝ ստարապիր. օր մը նորէն Մեծ-Պատերազմին մէջ լուսաղբար պիտի ըլլային: Ժա՛մն էր...

Երեսը զեփ զեղին, արախն փառակ գարնես՝ արին չեղէր, զլուրը կախ նստած էր Պատուելին Լուրի պարտեղը ծառի մը տակ.

— Ախ, առ ի՛նչ խըյանէթութիւն էր ինծի ըրին. լինցաւ, պիտի չսպրիմ. ան չէր:

Ու պատմեց զիրազգութիւնը, ըսեմ աղէտը սրուն մեծութիւնը մայր մը կրնայ զգալ երբ կ'սրնոցուցած զաւկին համար տարիներ ետքը յանկարծ կուզան կ'աւետեն. «Աչքդ լուս, աղապ գանուեցաւ, եկած է»: Կը վազէ կը աւանտէ. ան չէ, սխալ է եղեր:

Խարխափելով վեր ելած էր խանի մը սանդուղներէն. մտնելով մութ սենեակ մը «Հոգիս Գալուստ» կ'անչած էր: «Հոս եմ», պատասխանած էր տկար ձայն մը: Գէպի ձայնը երթալով զրկերուն մէջ սղմած էր իր Գալուստը, ջղային զրկումի պիւտուղ սեռովը սղմած: Ու զրկանոն վար կ'իջնէին.

— Ախ, սրչափ նիհարցեր ես, տղա՛ս, բայց բաշածներդ բարն ալ բաշէր կը հալէր:

Ու երբ դուրը կը հասնին, լուսին մէջ կը սարսույց Պատուելին: Արխանանը չէր: Եթէ ձեռքերը թուցած վար չկ'ախուէին, ա օրակոյս չի կար թէ այդ բոպէին պատուելին պիտի խոզէր կեղծ-Գալուստը:

Ետերուն տակ նստած էր բարեկամներու հետ, ես ալ քովերինն գացի: Մեծ միտխարանք է խօսակցութիւնը ցաւած սրտերու, վասն զի պահ մը կը զբաղեցնէ: Ու Պատուելին իր յուսախարութեան վշտին մէջ մեղքցաւ միւսն ալ, կեղծ Գալուստն ալ: «Անոր ալ եղաւ» ըսաւ բանազբօսիկ ժպիտով մը. եւ պատմութիւնը պատեց:

Անօթի, ծարու Ալեքսանդրիա կը նետուի այդ Գ. լուստը, ու կը դիմէ Հայերու օթեան մը, բիշ մը հոյք ինդրելով. անունը կը հարցնեն. «Գալուստ» կը պատասխանէ: Խօսքը իրեն տանք Պատուելին բերնով, ինչպէս պատմեց մեզի:

— Ի՛նչ ընէի, ըսած է խեղճ մարդը, անունս Գալուստ է. ուրի՛շ անուն մը տայի. մէյ մըն ալ տեսայ որ ետեւէն Արխանանց մըն ալ թախմիշ ըրեր են. չհասկցայ ի՛նչու համար: «Պարտն Արխանանց վեր, պարտն Արխանանց վար» ըսելով ինծի ձեռքէ ձեռք կը քաշեն: Սենեակի սուրին, կերակուր կուտան, պատիւ կ'ընեն, «մեր ընկերը» կ'անուանեն ինծի երբ ուրիշներուն կը ներկայացնեն: Չեմ գիտեր ի՛նչ է զործերնին որ ինծի ալ ընկեր կ'ընեն: Արհեստի մը ալը եմ եղեր, չիյալի: Մարդ մը եկաւ, անունը տուաւ, չճանչցայ, արդէն մէկը չեմ ճանչնար. «Որ դուն հերոս, որ Մենք հերոս» ըսելով ձեռք երկնցուց. լսած արհեստս չէ: Ինչ է նէ, կ'երեւայ թէ Աստուած վրաս պիտաց, ու ա՛լ նեղութիւններուս վերջ պիտի տայ, կ'ըսէի ինքնիրենս, երբ դուն վրայ հասար: Ի՛նչ ընեմ. ես ի՛նչ ըրի:

Ու Պատուելին համաչելով ըսաւ.

— Կ'երեւայ թէ իրենց հացին համար հերոսի պէտք ունեցողներ կան. բայց չէին կրնար ուրիշ անուն գտնել: Ախ, կարծեցի թէ կարօտս պիտի աւանդ, հիմա աւելի շատցաւ. պիտի չզիմանամ: Ան ուրախութենէս ետքը երբ

Գալուստին կեղծ ըլլալը խմացայ, սրաւս բան մը բրդաւ:
Արդէն տկար էր Պատուելին. քիչ մը ետքը մեռաւ:

* * *

«Մեռա՛ կարօտուն:» Գարեբէ ի վեր, ըսեմ՝ անյիշատակ ժամանակներէ ի վեր, իր երկիրը իր հողին վրայ հալածալ մեռնող, օտարութեան մէջ իրեններէն հեռու մեռնող միլիոնաւոր ու միլիոնաւոր Հայոց տապանաբար, րիտուն վրայ մեր սրտին աչքերովը չե՛նք կարգար ամէնուն ժահը փութացնող մէկ հիւանդութեան մը յիշատակութիւնը միայն. «Մեռաւ կարօտուն:» կարօտը մեր ազգային հիւանդութիւնն է:

Հերու աշնան երկուք էինք միս մինակ եղիպտական անապատ մը. Նեղոսի եզերքը մեր հանդարտ պտոյցաներուն մէջ մերիններուն միշտ կը մտածէինք, անոնց՝ սրտնց հետ զրական ու ազգային կռիւններու զաշտին վրայ անբախտ «լուսադարձներ» էինք: Հիմա ամենքս ցիրուցան. երկու տարի միայն մեզի իրարմէ կ'անջատէր, եւ սակայն կարօտին աւերող ցաւը կը զգայինք իր բոլոր սեզոնութեանը մէջ. ու մեր կտիծը շատ դառն էր թերեւս անոր համար սր բան մը անդարձ գացած էր: Մեր տիրութեանը մէջ բարեկամս կը գրէր մենէ մէկուն. «Կարօտցե՛ր եմ՝ «քիզի, շատ, շատ: Չեմ գիտեր ի՛նչ արտուր բան մը կայ «այս կարօտնալ բառին մէջ, զուտ հայկական արտուր» «թիւն մը: Գիտե՛մ ես որ կարօտ բառը մեզի ծանօթ եւ «ոչ մէկ օտար լեզուի մէջ կայ: Կարօտը անսնելու փա՛ «փաքն է առանց սրու ախտակալութեան մը, յուսահատ «փափաք մը, փափաք մը զոր ամէնէն աւելի Հայը զգա՛ «ցած է, իր սարտղնած՝ ցիրուցան վիճակին մէջ:

Գրել եմ՝ մէջ թղթիս թէ հոս մընացի,
Օրիկ մի օրեր աչերս չըբացի,
Սիրելիք, ձեզանէ կարօտ մընացի:

«Կրնայ զանուիլ Հայ մը սր իր սրտին խորէն չերզէ «պանդիտին այս երգը:»

Իր զարկութեանը մէջ սրու, ի՛նչ բանի կը կարօտի Հայը: Օ՛հ, կարօտ քաշող Հայուն այդ «սրտին խորը», ո՛վ պիտի կրնայ երբեք հոն թափանցել ու մանրակրկիտ նկարագրել թէ կարօտի ի՛նչ ցաւեր կան պահուցած: Այդ թաքուն հիւանդութիւններէն մէկը պատուեմ. «Համալսարանականի մը կարօտը»: Աշխարհի կեանքին մէջ էն խեղճ թշուառները սկեզօծիկները կը համարուին, անոնք որ զրուէն բարեկեցիկ կենցաղավարութեան երեւոյթով, ներքէն կը շարչարուին աչքերու անասն նեղութիւններէ. մտաւոր կեանքի մէջ մեծաշայն գեղարդները այն հայ զարկիները չե՛ն արգիօք սր գիտութեան ուժին տակ կը կրեն սիրտ մը՝ ազլա խեղճուկ զարկի գեղարդներովը տառապող:

Պելճիգայի Լուկէն համալսարանական քաղաքը վերջերս — ճիշդ ու ճիշդ թուականը չեմ յիշեր եւ կարեւորութիւն ալ չունի — կը գտնուէր հայ ուսանող մըն ալ, Մելքիսեպեկեան, կարծեմ էրզրումցի: Օր մը խեղճ երիտասարդը հիւանդ կ'իլնայ. վիճակը օրէ օր կը ծանրանայ:

Մահամերձները իրենց վերջին ժամերուն իրենց կեանքի առաջին օրերուն էն զեղեցիկ յիշատակներովը կը հրճուին: Անշուշտ իր սիրելիներն էին, իր երկրին զաշտերն էին, իր մանկութեան օրերը սր կուզային կ'անցնէին հիւանդին աչքերուն առջեւէն. կը տեսնէր եկեղեցին, հովիտիքը սր ննջեցեալներու ընկերացած էր, եւ հիմա կոչնակն ու «հոգոցն հանդուցելոց» ները մեղմամբունջ կը թրթոսային սկանջին, ու ահա մեռելական աղօթքներուն կարօտն է սր կը մտնէ սիրտը: Կ'երկնցնէ ձեռքը եւ իր հոգեվարքի սնարը հսկող զրքերուն մէջէն կը վերցնէ հաս մը, հայրենիքէն հետը բերածը. հայկական ժամադիրը մը: Վարդոյր մը սակայն աչքերը ծածկած է, տառերը չի կրնար իրարմէ որոշել, եւ աղերսական հայեացքներով կը խնդրէ քովը գտնուողներէն ճար մը ընել, զանել մէկը սր այդ աղօթքները կարգայ իրեն. անոնց հեշտօրօք մեղեցիկ պիտի հանդարտեցնէ հոգին: Չէ՛, սխալած է հոսայեցի բանաստեղծը կարծելով թէ հոգեվարքին յետին թառանջը գէպի արեւուն լոյսն է:

Ուսուցիչները կ'իմանան արեւելցի իրենց սիրելի աշակերտին փափաքը. ու ահա լուսաւոր գոգափար մը կը ծաղի մաքերնին. արեւելեան լեզուներու ուսուցիչ մը կայ Լուկէն, խնդրել անիկ քանի մը բոպէ այդ սփոփանքը տալ հայ հոգեվարքին: Հիւանդին զեղնած այտերուն վրայ ուրախութեան ժպիտը կը թռչտի երբ կ'իմանայ թէ իր փափաքը պիտի կատարուի: Արեւելեան լեզուներու ուսուցիչը ծանրաբայլ ներս կը մտնէ, կը մօտենայ մահճին սնարը, կ'աննէ աղօթադիրքը, կը բանայ, կը նայի, երեսները կը դարձնէ, ու նորէն կը գոցէ: Ասիկայ ուրիշ լեզու է, ինք քաղցրեղէն գիտէ:

Մելքիսեպեկեանի խելքը դեռ վրան է. կը յիշէ հայրենիքին աւանդութիւնը. հոգի քաշողին սրտին վրայ հանդիսեցնելու է իր կարօտացածին մէկ յիշատակը, սրդէն զի հոգին թեթեւ թռչի. կ'աննէ աղօթադիրքը, կը գնէ սրտին վրայ. ու կը մրափէ, վերջնապէս:

* * *

Հայկական հոգեբանութեան ի՛նչ սիրտ կարօտը հաւաքածոյ մը պիտի ըլլար ան — եթէ կարելի ըլլար կազմել — որ իր մէջ ամփոփէր պանդխտութեան մէջ մեռնող Հայերուն վերջին կարօտին հառաչանքները: Այս մտածուածութիւններուն մէջ կի երբ քանի մը շաբաթ առաջ Բարիկ կը շրջադայլի քանդուելու մօտ Մազասի բանտին շուրջը, ուրիշ ուրիշ հայու մը կարօտի հծծիւնը կարծես կը լսէի, թէ քառսրդ զար մըն է որ մարած է այդ ձայնը:

Խեղճ Ռոստանիկ Տէր-Մարգարեանցը, վիթխարի երազներու զոհը, կարօտները սրտին մէջ մեռած: Եւրպիան կարողութիւններով էր օժտուած այդ տղան, սր վանի գիւղէ մը կուզար ու Գրանտան Հայաստանի վերածնութեանը ծառայեցնելու հսկայական զազափարին կը փարէր: Երտուն երեք տարիներէ յետոյ դեռ աչքիս առջեւ են այդ սեւ գէմքը, լայն խաշոր ճակատը, դուռը մազերը, փայլուն աչքերը: Պոլիս Օրթադիկ «կէս հոգեզաւակ» մըն էր Բարովիչ Արուս հանրմին տունը, եւ կուզար թարգմանչաց

վարժարանը դաս առնելու: Հայրիկի միջնորդութեամբ Բարիզ կը խրհուի Մուրատեան վարժարանը, ուր Լանկլուս օր մը զինքը կը նետէ Նուպար փաշայի առջեւ «Ահա՛ նուպիական առիւծ մը» ըսելով: Նուպար փաշայի պաշտպանութեամբը կը իրենեոնի վարժարանը կը մտնէ: Ազգային ինչ հպարտութեամբ ուռեցան հայ սրտերը երբ օրագիրները կը հաղորդէին թէ Ֆրանսայի երկրագործական մեծ հաստատութեան քննութիւններէն ոսկի շքապարտի արժանացողը Հայ մըն է, վանցի երիտասարդ մը, Ռոտանիկ Տէր-Մարգարեանց: Փառաւոր սեղանով մը որուն շուրջը կը բոլորին նշանաւոր անձնատրութիւններ կը տօնեն հայկական կարողութիւններուն այս մեծ յաղթանակը. ու ժիւզ Սիմոն, Հանրային կրթութեան նախարար, սեղանակից այդ վանցի «կէս-հոգեղաւակին», կը զրուատէ հայ ազգը յանձին Ռոտանիկի: Ծանր, ակազմակիւն, Ռընանի եւ Լէոն Սէի «Տէպա»ն իր էջերը կը բանայ հայ գիտնական-իշխանին առջեւ: Հիմա ա՛լ իշխան է Ռոտանիկ, բռնա. Նուպարը իր հօրեղբայրն է, Օնթը, որուն հետ սակայն «աւրուած է»: Աս՝ աւանդութեան մէջ է. առանց այս պայմանին արեւելցի երիտասարդ իշխան մը «չիք» չի համարուի: Կ'այցելէ Պոլիս. Օտեան զինքը կը ներկայացնէ Միգհաս փաշայի, որ «Թիրքերոյ պարճանք եղող» այս գիտնականին բարձր պաշտօն մը տալու պատրաստակամութիւնը ցոյց կուտայ: Բայց Ռոտանիկ թրքական էֆենտի մը ըլլալու փառասիրութենէն մզուած չէր որ վանի զեղէ մը մինչեւ իշխանութեան սլացած էր. իր երազը հայրենիքի ազատութիւնն էր, ու ինքը պիտի ըլլար Եւրոպայի մէջ հայկական գաղտնի տէր հայ իշխանը: Համբաւ, փառք, պատիւ, ամէն ուժեղութիւն արգէն տիրացած էր. կը մնար անանց վրայ ուրիշ ու՛ մըն ալ աւելցնել, զրամբ: Անհակօրով այդ գէւքը, աւելի ակրիկեան թերեւս քան ասիական, կը խելայեղէր զեղեցիկ սպանուհի մը, իշխանական տիրադատով, և մեծ գանձով: Ամուսնութիւնը պիտի կատարուի, բայց Ռոտանիկ Հայ է, ու վանցի հայ. ո՛չ քաղաքական ամուսնութիւն, ո՛չ լատինական ամուսնութիւն, այլ հայկական սոսկապարտութեամբ պէտք է սրբագործուի իր «իշխանական» ճակատը, ու մանաւանդ վանցի հայկական պատկապրութեամբ: Ռոտանիկայն վանցի հայ քահանայ մը ճամբայ կ'ելլէ Բարիզ գալու. Թո՛ղ ան հասնելու վրայ ըլլայ, և ահա հեռագիրը աշխարհի չորս կողմը կը ծանուցանէ «Ռոտանիկ Տէր-Մարգարեանց ձեռքակալուած է զրամաշորթութեան ամբաստանութեամբ:» Եթէ վաթերույի առջի զիշերը անձրեւ եկած չըլլար աշխարհիս ճակատագիրը պիտի փոխուէր, կ'ըսեն: Չեմ գիտեր թէ թէ Հայոց ճակատագիրը պիտի փոխուէր եթէ վանցի աւրաւը քիչ մը փութիտ գտնուէր: Ամուսնութեան երկրորդ օրը Ռոտանիկ արգէն միջինատէր հարուստ մը կը գտնար, կը վճարէր պարտատէրները, և ա՛լ վաւերացեալ հայ իշխան իր երազներուն իրականացումին կ'աշխատէր: Հայրենասէր մըն էր:

Բարիզի հրեայ գոհարավաճառներէն «փոխառութիւն» ըրած էր, ու անոնք քանի մը օր ալ սպասելու անհամբեր, զիմա՞մ էին դատարանին, ինչ որ իրենց «գործի մարդ» ըլլալուն ապացոյցը չէ: Ու մինչեւ հիմա զեռ համբաւաւոր

է մէկ հրեային պատասխանը երբ գատաւորը կը հարցնէր իրեն թէ ի՞նչպէս համոզուած էր Ռոտանիկին հարուստ իշխան մը ըլլալուն, որով ապագի զոհար տուած էր անոր:

—Օ՛հ, Պարոն գատաւոր, ի՞նչպէս չի հաւատայի, կը պատասխանէր հրեան ցաւագին ձայնով մը. բայց աշխարհազրական քարտէսին վրայ ինձի ցոյց տուաւ վանք, լիճը, ան մե՛ծ լիճը, իր անունը կրող Ռոտանիկ հողերը, ամենքը, ամենքը աչքովս տեսայ աշխարհացոյցին վրայ, ի՞նչպէս չի հաւատայի:

Շատ չինգանք այս հրեային վրայ: Օր մը Հայերն ալ, ոչ թէ հատ մը այլ խմբովին, պիտի չի հաւատային որ մեծահարուստ իշխանագուն մըն է իրենց ազատագրութեան առաջնորդը: Ի՞նչպէս տարակուսիլ. պարսկական Հայաստանի քարտէսին վրայ միթէ չէին կարդացուեր ականներու, զիւղերու անունները. հօրենական, պապենական կալուածներ էին ուրեմն անոնք:

Հինգ տարի Մագասի բանալը մնալու գատապարտուեցաւ: Չկրցաւ զիմանալ եւրոպական բանալի մը բարբարոսութիւններուն: Ու կարօտներով լեցուն սրտին վերջին հառաչանքը Հայրիկին գրեց. հայ պանդխտին էն ցաւագին հառաչանքներէն մէկն է, ու եղականներէն մէկը, թերեւս եզակիներ: Հայրենիքին համար հաւատքով լեցուն խանդավառ սիրտն է, զօրաւոր միտքը որ ուժեղ կամքի մը ապաւինած կը վազէր նպատակին, և հասնելու պահուն քար մը կը հանդիպէ ստրին ու կը զլտորի, կը վիրաւորուի, կը մեռնի:

* * *

Շատոնց վիրաւորուած, բայց առանց զլտորելու հանգարտաբայլ գէպի մահը գնաց Պետրոս Սրապեան, տաղանդաւոր պատկերահանը, ազնիւ մարդը, իր հետ տանելով զեզափայլ թուականի մը երազանման յիշատակները: Այն սերունդէն էր որ Պալեաններու նախադահուլթեան տաճի զեզարուեստը հայկական մենաշնորհ ուզեցին ընել Թիրքերոյ մէջ: Իր բաժինը ունեցաւ Սրապեան այդ խորհուրդներու իրագործումին մէջ: «Ուստա» անուանած էր զինքը սուլթան Ազիզ, հիանալով արքունական պալատը զեզազարդող Սրապեան նկարներուն վրայ: «Վարպետ» հոչակեց զինքը հայն ու օտարազգին Նոր-Թատրոնին պատկերներուն ի տես: Ու օր մըն ալ ազգային սրտին պատկերահանը եղաւ: Պերլինի վեհաժողովին յաջորդող տարիները հաւատացեալ յոյսի օրերը եղան, խանդի և աշխատութեան օրեր: Քարոզիչը, զիւանագէտը, բանաստեղծը, հրապարակագիրը, ամէն Հայ գէպի վերածնութիւն կը մղէր յաղթանակով. զեզարուեստն ալ իր բաժինը պիտի ունենար. մեծ Համանուագին մէջ Արուեստին ներկայացուցիչը Սրապեան եղաւ, երկու խորհրդանշան պատկերով. «Քաղէջի հայ աղջիկը» սոհմային տիրանուչ զեղեցիկութիւնը սրտերու կայցուց, ու «Մանուկ աղբարը» Հայաստանի վշտերուն խտացումը, որուն կծկոտած բազմաշարժար զիմագծերուն առջեւ Գրիգոր Նիկողոսեանի սրտէն թռաւ Քամառ Քաթիպայի

Շինքն արեւառ, քրտինքը երեսին, բեռը շալակած, Ղարիբ մըշեցին մայրանի միջին կանգ առաւ յոգնած.

Օ՛հ, զեռ երջանկութիւն մը չէ՛ր այդ մշեցին « շլինքն արեւառ » . ետքէն եղաւ « շլինքն արիւնառ » :

Ի՞նչ եզան, ո՞ր գացին Հայուհին ու Մանուկ Աղբարը :

Խեղճ արուեստագէտը . ի՞նչ կը թողու սրտին, տազանդին ծնունդներէն . բանտ՝ պաշտաները որ զարդարեց . մտիկը՝ Նոր-Թատարները . ցիրուցան՝ նկարները : Աներեւութացեալ ամենքը, ու այդ ամէնէն միայն յիշատակ մը սիրող բարեկամներու սրտին մէջ, յիշատակ մը օրապրութեան մէջ, մինչեւ որ բարեկամներն ալ, օրագիրն ալ երթան իյնան Մեծ-Աներեւութացումին զիրկը :

ՀՐԱՋԴԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՑՈՒԹԻՒՆԸ

ՎԱՆԻ ՆԱՀԱՆԳԸ

Հ. Եարմըզանի վերջին երկամասեայ տեղեկագրէն է որ պիտի բազմեց այս անգամ ամէնէն կոկիտի տեղեկութիւնները վանի նահանգին անտեսական կացութեան վրայ : « Արեւելքի վարժարաններուն Հաստատութեան » ընդհանուր տնօրէնը, մեր շարգերուն յաջորդ օրն իսկ, ոչ միայն Ֆրանսայի ճանչցուց մեր ազէտքին ամբողջ ահաւորութիւնը, մինչ ֆրանսական կառավարութիւնը ու մամուլը « լուսեան պաշտպանութիւնը » սարքած էին մեզի գէտ, այլ անմիջապէս Հայոց Նպաստամատոյց Յանձնաժողով մը կազմեց, որ մինչեւ այսօր 700,000 ֆրանքի գումար մը Հաւաքած ու բաշխած է Հայերուն :

« Արեւելքի վարժարաններուն Հաստատութեան » վերջին տեղեկագրին մէջ (մայիս-յունիս) չորս նամակ կը գտնենք վանի գոմիւնիկեան միոխնարութեան մեծաւոր եւ Ֆրանսայի հիւպատոսական գործակալ Հ. Տըֆրանսէ, տրան ալ ծանրացող նահանգին մէջ տիրող թշուառութեան ու սովին վրայ :

Ապրիլ 4 թուականով, Հ. Տըֆրանս կը գրէ թէ Հ. Եարմըզանէն ստացած վերջին գումարները յատկացուցած է Էրշէքի (844 բնակիչ) եւ Կարակունտուզի (1198 բնակիչ), յունուարի սկիզբը անոնց բաժնելով ցորեն ու հանդերձեղէն, ու փետրուարի մէջտեղը՝ դարձեալ ցորեն : Ասով, այդ թշուառները պիտի կրնան ապրիլ մինչև օգոստոսն բացուիլը, մինչեւ այն օրը ուր ճամբաները բացուելով պիտի կրնան երթալ ապրուստին ճարել ֆիւրտերուն մօտ : — Ահաւասիկ ցանկը այն զիւղերուն որոնց Հ. Տըֆրանս ուտեստ ու հանդերձեղէն կամ ուտեստ միայն բաշխած է. Կատէլաւա 168 բնակիչ, Միսլքիներ 181, Խէնո 222, Էրմէնէս 118, Թոնի 137, Էսիֆաք 243, Ֆարուս 205, Սէպ 252, Սաթի-պէյ 113, Քասէօր 210, Տաղ-Վերէն 355, Աղճա-Չայ 65, Պաքշան 163, Մարոնանան 396, Չերկիլի 136, Օլանեան 155, Պիշի 20, Ոստեան 24, Բէնքափա 30, Սուքունուս 36, զանազանք՝ 143. գումար 3,366 հոգի : Ասոնց վրայ աւելցնել

լով Էրշէքի եւ Կարակունտուզի բնակիչներն ալ, կը տեսնուի որ 5,408 զեղացիի նպաստ բաշխուած է, 500 հոգիի ալ վան բաղքին մէջ : Այս 5,908 հոգին 22,000 ֆրանք ստացած են, մարդ զլուս միջին Հաշուով 4 ֆրանքէ աւելի :

Գիւղերուն մէջ է որ թշուառութիւնը ամէնէն աւելի ահռելի է : Կարակունտուզի բահանան ըսած է Հ. Տըֆրանսի թէ յունուարի սկիզբը, զեռ Հ. Տըֆրանսի նըպաստը չհասած, ԵՐՄՈՒՆԵՐԿՈՒ ՀՈԳԻ ԱՆՕԹՈՒԹԵՆԷ ՄԵՌԱՄ ԵՆ :

Հ. Տըֆրանս կը յայտնէ թէ իր ստացած վերջին նպաստը, 15,000 ֆրանք, պիտի յատկացնէ եզ ու արօր գնելու եւ գիւղացիներուն բաժնելու, զանոնք այսպէս ազատելու համար ֆիւրտերուն ձեռքէն որոնք շարգերուն ատեն Հայերէն գողցած արջանին անոնց փոխ կուտան անտանելի պայմաններով : Նոնպէս մտազիր է վերականգնել վանի մէկ թաղը որ ամէնէն աւելի փաստած է 1896 յունիսի շարգերուն ատեն : Բնակիչներուն մեծ մասը, իբր 200 տուն, բաղքին միւս թաղերը ցրուած են : Հիմա Հ. Տըֆրանսէն կը խնդրեն որ իրենց այրիներուն եւ որբերուն հոգ տանի, կաթոլիկ եկեղեցի մը եւ կրօնաւոր մը տայ իրենց, նոյնպէս իրենց ազահալէ ֆրանսական հիւպատոսարանին պաշտպանութիւնը, որով պիտի համարձակին վերագտնալ իրենց հին տունները որոնք մասամբ այրած եւ մասամբ քանդուած են :

Հ. Կալան վանի կաթոլիկ որբանոցին տնօրինութիւնը սասանձած է եւ մտազիր է աւելցնել յունուարին առաջ հոն հաւաքուած 25 որբերուն փութը :



Ապրիլ 11ին, Հ. Տըֆրանս կը գրէ թէ ստացած է Հ. Եարմըզանի զրկած 20,000 ֆրանքի նոր նպաստը : « Ես կարծած էի թէ բրիտանեայ գիւղացիները պիտի կրնային, դարունը սկսելուն պէս, իրենք իրենց բաւել, եւ թէ իմ քովս եղած 15,000 ֆրանքը պիտի կրնայի անարդէլ գործածել եզներ գնելու : Արդ անկից ի վեր, սովահարներու ինչպիւրքներէն սղողուեցայ : Ասոնք մասնաւորապէս կուզային Էրշէքէն, Կարակունտուզէն, Էրմէնէսէն, Ֆարուսէն, Մարուանանէն եւ շրջակայ վեց գիւղերէն . վանէն հինգ օրուան ճամբայ հեռու Լէվինի նեոտարական պաւտակէն չքաւորներ եկած էին, առանց կանգ առնելու լեռները ծածկող ձիւնին առջեւ : Մէկ բանի օր զիմազրել ետքը, ստիպուեցայ տեղի տալ . այլ թշուառ զիւղերուն մէջ բա՛ն մը մնացած չէր . միսիոնարներուն տուածովը միայն կ'ապրէին : Ամերիկացի միսիոնարներն ալ, որոնք սերձեցանի համար 5,000 չափ ցորեն պահած էին՝ 1,800 օսմանեան սակի արժէքով, ստիպուեցան սովահարներուն բաժնել ատիկա : » Հ. Եարմըզանի նոր նպաստը ճիշդ ժամանակին հասած է : Հ. Տըֆրանսը ազատելու իր մտատանջութենէն :

Թիւրք իշխանութիւնները խառնուել կ'ուզեն նպաստներու բաշխման գործին : Ասիկա աղէտը մը պիտի ըլլար, որովհետեւ Հ. Տըֆրանս վստահ է որ զրամը իր նպատակին չի պիտի գործածուի : Բարեբաղդաբար ինք կը յուսայ խոհեմութեամբ եւ գլուշաւոր ուժի սմբ այդ գոտարութեան մէջէն ելլել :

Մայիս 4 թուակիր նամակը գրեթէ ամբողջութեամբ ներկայացնենք. — «Չոր վերջնութեւ 1,500 ֆրանքի նպաստը եւ քոյս աւելցած 1,500 ֆրանքը ամբողջովին բաշխեցի այն զիւղերուն որոնց արդէն նպաստած էի եւ 12 ուրիշ նոյնքան չքաւոր զիւղերու (որոնց ութը նետտորա կան): Շատ ընտանիքներ անագորոյն զրկանքներու կ'են. թարկին իրենքզիրենք եւ ասդին անդին բաւանող խոտերով սնանելու կը համակերպին, որպէս զի կարենան աշնան ցանքին գործածել իրենց ստացած գումարները: Ոգի ի բոխն կ'ուզեն իրենք իրենց բաւելու յաջողիլ եւ ա'լ բեռ չըլլալ Եւրոպայի եւ Ամերիկայի բրիտանիաներուն... Պիտի կրնան»:

«Սկսայ եզ գնել: Ապագային պիտի գրեմ ձեզի թէ ինչ ծառայութիւն մատուցած պիտի ըլլան ասոնք հողագործներուն որ ստիպուած են Քիւրտերուն զիմել եւ վարձել իրենց գողցուած արջանները, ու, հունձքին ատեն, իրենց բերքին լաւագոյն մասը թողուլ այդ անյազ ընկերներուն ձեռքը, որոնց առիւծի պայմանները ստիպուած են ընդունիլ:

«Ստիպուած եմ նոր նպաստ հայցել ձեռն մէկ քանի զիւղերու համար, որոնց խնդիրքը մերկայ անգլիական պիտի ըլլար: Անոնցմէ կը յիշեմ Նորկոհ, Վանէն երեք ժամ հետու, որուն բնակիչները, ի լրումն զմարդգութեան, Պաշգալէ զրկուած զօրքերուն ճամբուն վրայ գտնուելով, ծայրագոյն թշուաութեան մէջ են: Իմ գալագո, որ այդ զիւղէն անցաւ այս օրերս, կը գրէ թէ չքաւորութիւնն ին խելքէ մտքէ դուրս է: Ամէն բան սպասած է. զիւղին 500 բնակիչները գրեթէ միմիայն զաշտի խոտերով կը պահեն սղորմելի կեանքերնին: Քալաճըքի 104 տուններուն համար իբր նպաստ ու սերմնցու 3,000 ֆրանք պէտք է. նոյն վիճակը ունին Նանիկ, Խարազանձ, Սիրիէ, Աւերակ, Շուշան, Քուրպաշ եւայն, ու Նորգուզի, Կաւաշի, Կարճկանի, Թիւմարի, Խաւասորի բազմաթիւ զիւղեր: Այս գիւղերուն թշուառ պատուիրակները օրերով փողոցին մէջ պտուկած կը մնան մեր զրանը առջեւ, ուսելիք եւ սերմնցու խնդրելով:

«Վանի մէջ ալ ստիպողական գործ մը կայ, ամբողջ հայ թաղի մը վերականգնուած: Երեք շաբաթ առաջ ինձի զիմեցին բնակիչներ Վանի այն մասէն որ կը կոչուի Կըլորտար կամ Խարապա Մահալլէի, Քարալի Օղլի Մահալլէի եւ Ժամիկ: Ինձի կ'աղաչէին հետաքրքրուիլ իրենց մով. եթէ անօժանդակ մնային, իրենց թաղը մէկ երկու տարին պիտի պարպուէր բրիտանիայ բնակիչներէն որոնց կացութիւնը անտանելի զարձած է զրացի իսլամներուն ձեռքէն, եւ ասոնց ձեռքը պիտի անցնէր: Այս հակիրճ տեղեկութեան վրայ, որոշեցի երթալ խնդիրը ուսումնասիրել տեղին վրայ:

«Այս երեք թաղերը կը գտնուին Վանի «Արեւմտան» կոչուած մասին մէջ. Հայոց հոծ մասէն եւ Արարուց եկեղեցիէն բաժնուած են գետակով մը որ շրջակայ լեռներէն կ'իջնէ եւ, թէպէտ ամառը գրեթէ չոր, հիմակ իր դեղնաշորթ ու աղմուտ չուրը կը թաւալէր: Մէկ կողմէն կցուած են Եւմիրան Ալթը իսլամ թաղին, ուր կարծես համախառնած են ինչ կար մարեանգութիւն, վայրագ բնազդ-

ներ, կողոպուտի եւ արեան ծարաւ որ կան իսլամութեան մէջ: Միւս կողմերէն, գաշտին վրայ կը բացուին: Չարպէն առաջ, 200 տունէն աւելի կը հաշուուէին, գրեթէ ամենքն ալ զիւրակեաց, եւ մէկ քանին շատ ունեւոր: Օզը մաքուր է. պարտէզները, մէկ քանի աղբիւրներու ջրերէն ոռոգուած, տակաւին հպարտութեամբ ցոյց կուտան, հան ուր աւերման տապարը գործած չէ, իրենց որթատունկերը եւ պողատու ծառերը: Բուսականութիւնը մինչեւ փողոցները կը պոթվայ, եւ գանոնք ահօսող ջրանցքները եզերուած են ուտիներով, բարտիներով: Դէպի այս թաղն էր որ, հազիւ երկու տարի առաջ Վանի ամէնէն խնդունը եւ ամէնէն հարուստը, քայլերս ուղղեցի:

«Գետակը անցնելով, մտայ երկար փողոց մը սըր մէկ տուն մը միայն մարդ կար, վարձակալ մը. բոլոր միւսները պարապ էին. մահուան լուծիւնը կը տիրէր ամէն կողմ: Երկարականի տունները, ինչպէս այլուր, կրակի տրուած էին. հողէ պատերը, հրդեհէն ծուխէն սեցած, շիւշիտակ կեցած էին, բացի պատշգառներէն որոնք փլած վար եկած էին: Ներսը ամբողջ այրած էր: Աւելի խոնարհ տունները, զորոնք հրդեհը խնայած էր, ո՛չ գուռ ունէին, ո՛չ պատուհան, այդ տխուր օրերուն յաղթականները առած տարած ըլլալով ամէն ինչ որ կրնար արժէք մը ունենալ իրենց համար. մէկ քանի գուռ միայն, որոնք իրենց խեղճութեանը պատճառաւ հոն թողուած էին, բանութեանց հետքը կը կրէին, յարձակողներուն տապարին յառաջ բերած բացուածքները խոշոր կ'երեւնային: Տեղ տեղ, ջրերուն մզումը ծակած էր պատշգառները, ճամբաներ բացած պատերուն մէջ. ամբողջական քայքայուած մտալուս կ'երեւնար:

«Աւելի պատկառելի աւերակներ ուշադրութիւնս գրաւեցին. աւերակներն էին ասոնք երեք եղբայրներու տուններուն որոնք ընկուզի կոճղի առետուրին մէջ հարստացած էին եւ որոնց երեքն ալ խողխողուած էին յունիս 15ին: Չորրորդ եղբայրնին, որ նոյնպէս ջարդին զոհ գնաց, ան ատեն հիմերը կը գնէր իր նոր տան որ հողին երեսէն մէկ օտք բարձրացած էր արդէն: Այս կիսկատար հիմերը ճշմարիտ պատկերն էին այստեղի կանգ առած կեանքին, յորմէ հետէ կոտորածի մոլեգնութեամբ զինովցած վայրենիներու անարգ ետթաղանը արեան հեղեղներ վազցոյց ամբողջ նահանգին մէջ:

«Քայլերս արագեցի փախչելու համար այս հոգեվարքի անսարանէն, եւ մտայ տունը ուր ինձի կը սպասէին: Կիներ ու տղաքներ միայն կը բնակէին հսն. տանտերեր, որոնք ուրիշ թաղ մը հաստատուած էին, եկած էին այդ զինին յօշիւ: Հոս իմացած պատմութիւններս առջիններուն չափ աղեկէլ էին:

«Այս շէնքը ապաստանարան եղած էր 33 Հայու, որոնց մին մահացու կերպով վերաւորուած. իսլամներու խուժան մը կը շրջապատէր զանոնք: Անգլիոյ հիւպատոսը, Պ. Ուելիլմս, հոն գնաց իր հիւպատոսարանը տանելու համար պաշարեալները որոնք, սուտ զրոյցներէ խաբուած, համոզուած թէ ամերիկեան հաստատութիւնները գրաւուած եւ կողոպտուած էին, թէ անգլիական հիւպատոսարանին վտանգ կը սպաննար, չուղեցին իրեն հետեւիլ:

Հիւպատոսը սակայն առաւ վերաւորը զոր երկու երիտա-
սարգ պատգարակի մը վրայ տարին, բացորոշ խոստում
առնելով թէ նոյն իրիկունը իսկ ետ պիտի զրկուէին իրենց
ընկերներուն քով որոնք կը յամառէին մնալու: Աւագ,
երրորդ փարձան, պարտեզը, ուր նստած էի, շեցուած էր
թաղին բնակիչներէն Հինգ Հարիւր կիներով ու տղաքնե-
րով, որոնք կ'աղաղակէին, կ'ողբային կուպային իրենց
մեռելները. իրենց փրկող ընկերները, զորոնք թողած
էին կէս օրէն երկու ժամ ետքը, շարգուած էին եւ տունը
հրկիզուած:

«Աջ կողմս, ինէ տասնըհինգ քայլ հեռի, պատու-
հան մը կայ, ուսկից տանտէրը, խանչլրով սպաննելէ յե-
տոյ, պարտեզը նետած էին: Ետիս, հեռուն, այդիով մը
բամուռած, ինծի ցոյց տուին կիսափուշ շէնքեր, որոնց
մէջ այրիներ ու սրբեր միայն մնացած են:

«Ոտքի կ'ելլեմ՝ շարչարուած այս յիշատակներէն,
այս աւերակներուն տեսարանէն որոնք կարճես գեռ ծխա-
շունչ են, ա՛յնքան փայլ կ'արձակէ պատերուն սեւութիւ-
նը, եւ թախմայի պայտս կը շարունակեմ:

«Երկու տարի առաջ կատարուած վայրագութեանց
այս հետքերուն քով, ընդհուպ տեսայ ուրիշ վայրայու-
թեանց հետքեր ալ որոնք կը բացատրեն թէ ինչու՞ ընա-
կիչներէն շատեր չեն համարձակիր տուներին գահ սլու:
Առջի զիշերը եկան ծառեր սոցսցած էին: Միանգամայն,
քովի տունը քարխոսած էին, և գտնուած մէկ քանի բուր-
ջերը առած տարած: Այս յարձակման ենթակայ եղած
տարաբաղկանքը տակաւին սարսափէն զողահար էին:

«Պարտեզէ մը անցայ, ուր այդ սուղի օրերուն դիւ-
ցազներէն Հինգ վեց հոգի տեղադրուած էին, խաղալու
եւ խմելու համար: Անոնցմէ մին, հերքելեան կազմուած-
քով, աչքերը արիւնով շեցուն, կուրծքը ցցուած, ինքը մի-
այն քառուէն աւելի Հայ սպաննած էր, եւ գիշեր ցերեկ
կը պառտը իր սպաննած մարդերուն պարտէզները, իր
զահերուն կիները ու աղջիկները ահ ու սարսափի մէջ
խողլով: Ճամբան այնպէս էր որ քովէն անցայ: Այդ մար-
դու դէմքով վազըրը, որուն ամբողջ անձը իր շահատակու-
թեանց հպարտութեամբ կը փքար գեռ, մէկ քանի ամիսէ
ի վեր ոստիկանութենէն կը փնտռուէր՝ իր սպասուորներէն
մին սպաննած եւ կտոր կտոր ըրած ըլլալուն համար:

«Ասկից՝ Քարսի Օղլի թաղը գացի, ուր կին մը
միայն սպաննուած էր 1896 ին: Բնակիչները, որոնք զին-
ուած էին, ամբողջ օր մը դիմացած էին, մինչեւ որ զինուո-
րական պահակախումբ մը, որ ուսահպատակի մը պաշտ-
պանութեանը համար ուսական հիւպատոսարանին խընդ-
բանքովը եկած էր, անբռնարարելի սպաստանարան մը
գտաւ ամբողջ բնակիչներուն որոնք հոն խուսկցին և փըր-
կուեցան, մինչգեռ անգին տուններին կը կ'ողբալէին եւ
կ'այրէին:

«Նշանակելի բան մը չիմացայ ժամիկ թաղին նկատ-
մամբ, ուր ոչ մէկ Հայ դարձած է եւ որուն բոլոր տունները
միախլմանները զրուած են:

«Կլբարտ սր 120 մարդ կորսնցուց այս վաղուց պատ-

րատուած կատարածին մէջ. 30 հոգի ալ, որոնք Պարս-
կաստանի ճամբան բռնած էին, սահմանադիւին մէկ քանի
ժամ մնացած՝ խողխողուեցան:

«Այս շարքը անո՛վ մանուանց անարգար սնալի է որ
ժողովուրդը ս եւ է շարեման մասնակից չէր եւ զինուած
չէր: Բայց աշխատութիւնը զայն հարստացուցած էր, եւ,
ինչպէս կուտակալ մը կ'ըսէր, տիրող ցեղը չէր կրնար
հանգստանալ այդ մպիրհ պերճանքին տեսքը. ուստի պա-
տապարտուած էր անհետանալու:

«Այս բացատրութիւններէն պիտի կրնաք գնահատել
ինծի եղած խնդիրքը: Ապահովութիւն չի կայ, միախլ-
մանները՝ այս թագիրուն տիրանալու ցանկացող՝ սպառ-
նալիքները եւ շարագործութիւնները կը բազմապատկեն
հոն, ստիպելու համար քրիստոնեաները որ տուններին
տեղերին թողուն եւ այլուր փոխադրուին: Ինծի պատմու-
ցին թէ տուն մը սր 130 ոսկի կ'արժէր՝ 12 ոսկիի ծախ-
ուած էր:

«Այս մարդիկը կ'ուզեն շարունակել իրենց հայրերուն
տունը ապրել: Ասոր համար ինէ կը խնդրեն առձեռնայ եւ
կեղեցի մը, վարձարան մը, բահանայ մը, — ինչ որ իրենց
համար միութեան կեցրոն մը պիտի ըլլայ վտանգի պա-
հուն. ինէ կը խնդրեն նաեւ իշխանութեանց մօտ միջնոր-
դելով գազրեցնել արհաւիրքի թուականը, որ ընամտիքի
մեծերը կ'արդիւէ վերահաստատուել իրենց հին բնակա-
րանները և այրիներուն միայն թող կուտայ հոն հաստատու-
ուիլ առանց մահուան վտանգի. կը խնդրեն նոյնպէս հո-
գալ այդ այրիները եւ իրենց բազմութիւ զաւակները որոնք
թշուառ կեանք մը կը քաշկոտեն:»

Հ. Տըֆրանս յանձն առած է կատարել իրեն եղած
խնդիրքը, ու կը հաշուէ թէ այդ ձեռնարկը ի գլուխ հանե-
լու համար 10,000 ֆրանք կը բաւէ, զոր թախանձագին
կը խնդրէ Հ. Շարմըզանէն: Նոյնպէս կը խնդրէ 1,000 ֆր-
յաակացնել վանի հայ հասարակութեան մէկ ձեռնարկին,
որ է վերականգնել քաղքէն մէկ ժամ հեռու երկու վանքե-
րու աւերակները եւ վանքերուն հոգրերուն ու հօտերուն
հասոյթով՝ 20 ական տղայ պահել հոն:

Հ. Տըֆրանսի վերջին նամակը մայիս 18 թուականը
կը կրէ եւ առաջիններէն ալ աւելի կոկիծալի է. «Վանի
նահանգին տխուր կացութեան վրայ տասնըհինգ որ
առաջուան տխուր տեղեկութիւններս զմբազմաբար շատ
ծիշլ են: Ամէն օրուան զկարքերը կուզան զանոնք հաս-
տատել եւ ծանրացնել: Տարակոյս չի կայ բնաւ թէ բոլոր
պաշարները սպառած են ձմեռը, թէ ամենքն ալ, հարուստ
ու աղքատ, այսօր հաւասար են հասարակաց եւ աննկա-
րազրելի թշուառութեան մը առջեւ, եւ թէ այս հաղարա-
ւար խեղճ անօթիները խտտեթէ ու արմատներէ զատ բան
չեն գտներ ուտելիք:

«Առաջ, զատ զատ զիւզեր էին որ մեզի կը գիմէին և
կը ջանային մեր կարեկցութիւնը շարեւ իրենց կարօտու-
թիւններուն վրայ. այսօր ամբողջ գաւառակներ են: Օր
մը, 32 զիւզացի կը վազեն կուզան նպաստ հայցելու
Մոսկի 40 զիւզերուն համար, որոնք գեռ 800 ընամտիք

ունին, 4,000 հոգի: Ըստ սրբաժ. իրենց հազուադեպ կապուսար քիչ շատ շնորհքով կ'երենար, իմացայ թէ ամբողջ գաւառակին օգնութեանը պէտք ունեցած էին՝ քիչ շատ ներկայանալի կերպով հազուադեպ հաս գալու համար: Ուրիշ օր մը, կ'աշխատին զուեթն շարժել կարճկանի 50 զիւզերուն վիճակին վրայ, սրտնց բնակիչները, առ նուազն 6,000 հոգի, ա՛լ ո՛չ հաց ունին, ո՛չ ցորեն, ո՛չ գարի, ո՛չ եղիպտացորեն: Յետոյ կաւաշի, խալսասորի, թիմարի եւայլն պատուիրակներն են որ իրարու կը յաջորդեն, աւմենքն ալ ապրուստի ո եւ է միջոցէ զուրի:

«Գեո երկուք ու կէս ամիս կայ անցընելիք հունձքէն առաջ, եւ այս մարդիկը պէտք է մինչեւ ան ասեն խոտերով ապրին մեծ մասամբ: Հացը շատերուն համար գրեթէ անձանօթ սնունդ մըն է: Աւէնէն աւելի ունեւորները, անոնք որ լուրջ երաշխաւորութիւն մը ապրու վիճակին մէջ են, կը յաջողին մէկ շափ ցորեն անուել Բիւրսերէն, հունձքին երկու շափ տարու պայմանաւ...»

«Ահա ամէն կողմէ հասած անզեկութիւնները: Միտինսարութեան Մեծաւոր Հայրը իր ճամբորդութեան առաջին հանգրուանն իսկ կը խնդրէր օգնութեան հասնել այն զիւզին ուր կանգ առած էր: Բազմաթիւ խեղճ ազաբներ գտած էր սրտնք երկու եւ երեք օրէ ի վեր բան մը կերած չէին: Աւա՛ղ, մէկ հատիկ զէպք մը չէ առ ուր որ երթաս, կը հաստատես ասիկա:»

«Մանչևորը կարտիան» թէ մէջ, Անգլիոյ «կանանց Հայկական Նպաստամատոյց Յանձնաժողովին» կողմէ՝ Տիկին Մաալէն Գուլ թախանձագին հրտւեր կը կարգայ Անգլիացիներուն իրենց օգնութիւնը շարունակելու ի նըպաստ Հայերուն: Յանձնաժողովը Վանի մէջ կը պահէ արհեստանոց մը եւ երկու սրբանոց, ամերիկացի Տր. Բէյնոլտսի տնօրինութեան ներքեւ: «Մեծ գործ մը պիտի ըլլար, կ'ըսէ տիկին Գուլ, Հայաստանի աւերածոյ վայրերուն մէջ բանալ արհեստանոցներ՝ Վանի արհեստանոցին պէս խնայողօրէն յանձնաձուլած, որովհետեւ աշխատութեան փոխարէն զրամ տալով, փոխանակ պարգապէս սորոմութիւն բաշխելու, ժողովուրդը կ'ազատենք մուրացիկանութենէ եւ անոնց արժանապատուութիւնը կը պահենք:»

Այս յօդուածին կցուած է Տր. Բէյնոլտսի մէկ նամակը, Վանէն թուագրուած մայիս 21: Կը յայտնէ թէ ըստիպուած է ծախքերը կարելի եղածին շափ պակսեցնել. ընդհանուր նպաստը զարեցուցած է, հիւանդներուն տըրուած օգնութիւնը՝ կէսէն աւելի պակսեցուցած է, նոյնպէս մանուկներուն թիւը: Արհեստանոցին կտաւին համար խնդրանքը դեռ շատ քիչ է: Որքերուն թիւը հասած է 350ի, եւ ա՛լ տեղ չի կայ որբանոցներուն մէջ:

Մայիս 25ին, տիկին Բէյնոլտս, ի բացակայութեան իր ամուսնոյն որ էրզրում գացած է միտինսարութեան տարեկան ժողովին համար, կը գրէ թէ երկու օրէ ի վեր առատ անձրեւ կը տեղայ, որ մեծապէս պիտի նպաստէ հունձքին եւ անշուշտ հացին զինը պիտի իջնցնէ:

ՕՐՈՒԱՆ ՔԱՆԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Հեռագիրները լեցուն են վիճելով կայսեր Պաղիտան ընկիթ մեծ ճամբորդութեան մանրամասնութիւններով: Առնց մէջ կը գտնենք խորասլէս թելազրոսկան լուր մը. Քայլերը հսկածներ 30 ին Բեթլեհէմի մէջ ներկայ պիտի գտնուի Հայ Որբերու համար Սաղիմական Ընկերութեան կառուցած մէկ նոր սրբանոցին բացման հանդիսին: Սրտայայտ անտարան մը պիտի ըլլայ ասիկա, սրուն նուանը զուար թէ գտնուի ոչ մէկ երկրի պատմութեան կամ գրականութեան մէջ: Մարդկային եզրայլութեան կրօնքին խանձարուքը եղող այդ զիւզին մէջ, Հայ որբեր երջելով պիտի գիտաւորեն ինքզինքը բրիտանիայ յարջորջող ինքնակալ մը որ իր ձեռքը կը գնէ իրենց զահէն արիւնտ ձեռքին մէջ: Այդ ազաբները մէկ բան մը ունէին ընկիթ. լալով այդ մարդուն առաջը նիտուել եւ ազազուել իրեն. «Ե՛ս աուր մեզի մեք Հայերը, մեր մայրերը:»

Բայց ասիկա չի պիտի ընեն, ու լաւ ալ չէ որ ընել արուր իրենց: Արցունքները խեղզելով, հատաչանքները կուլ տալով, իրենց նոր արթնցող զիտակցութիւնը պէտք է դորձանեն զիտելու զիրենք շրջապատող պարսպանները եւ օգտուելու անոնցմէ, որովհետեւ իրենք մասնաւորապէս զերակատարները պիտի ըլլան այն մեծ յեղաշրջման որ թիւրքիյ մէջ յամրաբար այլ ապահովաբար կատարուելու վրայ է գերմանական քաղաքականութեան ձեռքով:

Ահա տասը տարի է որ Գերմանիա իր ունեղ ձեռքը թիւրքիյ վրայ գրած է, սկիզբները անասե, թաքուն, ու, հեռահեռէ ստացուած յաջողութեանց հետ, հեռահեռէ աւելի համարձակ ու խիզախ: Այսօր ա՛յ այնքան զերակալ չի գրեք մը բռնած է որ ուս թերթերը խուճապի ազազակը կը բարձրացնեն. «Սվիեզ» յիշելով թէ Գերմանիա կ'աշխատի նաւային կայան մը ձեռք բերել Սուրիոյ ծովեզերքին վրայ ե Պարսից ծոցին մէջ, ու, կայսեր յառաջիկայ ուղեւորութեամբը, Գերմանիոյ բացարձակ զերիշխանութիւնը հաստատեր ամբողջ թիւրքիյ վրայ(1), բոլոր ուժովը կը յանձնարարէ ուս կառավարութեան աչքերը չորս բանալ Գերմանիոյ «փառասիրութեան եւ անյապութեան» զէմ, վերջէն շարաշար չզղջալու իր անհաղութեանը համար:

Ի՞նչ է Ռուսիոյ քաղաքականութիւնը թիւրքիյ հանդէպ: Քաղաքականապէս տկար ու միշտ խոտով, տնտեսապէս կործանած ու փճացած թիւրքիւ մը առաջ բերել, պատրաստ Ռուսիոյ ձեռքը կ'ընալու: Գերմանիա հիմակ

(1) Փոքր-Ասիոյ երկաթուղիներուն ցանցը, սքանչելապէս զծուած, Գերմանացիներուն ձեռքն է արդէն եւ հեռահեռէ աւելի պիտի ընդարձակի: Գերմանիոյ ձեռք բերած վերջին յաջողութիւնն է կ. Պալսոյ Բէյլիական վարժարանին անբանալը, որ Գերմանացիներու տնօրինութեան տակ պիտի վերակազմուի:

ծիշ պատր հակառակը կը բաղձայ որովհետեւ թիւրքիոյ մէջ իր շահերը քաղաքականէ աւելի անանական են :

Արդ, մենք որ այսօր, ամէն բանէ առաջ, նախ ապրիլ կ'ուզենք, գերմանական քաղաքականութեան մէջ մեր շահը կը տեսնենք : Ու աժգոհ աչքով չի պիտի տեսնենք գերմանական գաղութներու գալ հաստատուիլը փոքր-Առիւյ մէջ : Գերմանացին իր հետ պիտի բերէ ապահովութիւն՝ զոնէ իր շրջանակին մէջ, գրամագլուխ եւ բարձրագոյն զարգացման մը գործնական և հրահանգիչ օրինակը : Ասոնց ամէնէն՝ օգուտ միայն կայ մեզի համար : Քսանը, հինգ տարի առաջ Ամասիոյ մէջ հաստատուած քսան-երեսն տուն գերման գաղութին օրինակը մեզի քաջալերական է : Ասանց յիշելու քոնեաքի և լուցիլի գործարանները՝ որոնք լոկ պատահական հանգամանքներու պատճառաւ չյաջողեցան, գերմանացիները այդ կողմերը հաստատեցին մեքենական աղօթիքներ, որոնք շատով բարգաւաճեցան : Այսօր, քսան տարի ետքը, կը տեսնենք որ ոչ միայն այդ աղօթիքներուն էն զլիաւորը Հայերուն ձեռքը անցած է, այլ հայ (եւ քիչ թուով ալ յոյն) մեքենագործներու ամբողջ գասակարգ մը առաջ եկած է որոնք Ամասիայէն մինչեւ Սամսոն աղօթիքները հաստատած են եւ կը բարգաւաճին :

Այսուհետեւ, աներկբայ, Գերմանացիներուն հետ մեր մրցումը՝ այլքան զիւրին պիտի չըլլայ : Բայց, մենք ճիւղն ցեղ մըն ենք, լաւագոյն ընդունակութիւններով, եւ պէտք է յուսալ որ մեզի վէճ՝ ելած աւելի ուժեղ եւ աւելի լաւ կազմակերպուած մրցման պիտի տուանք՝ մենք ալ մեր կողմէ աւելի խելք, աւելի զիտութիւն, աւելի աշխատութիւն թափելով : Պէտք է ցոյց տանք որ վիտենք հանգամանքներուն բարձրութեան հաւասարիլ, և ապահովութեան ու խաղաղութեան մէջ, միմիայն ասիացի կէս-վայրենի ցեղերու հետ չէ որ կրնանք մրցիլ :

Եթէ Գերմանիա, իր շահուն համար, — որ մեր ալ շահուն կը համապատասխանէ, — կարենայ թիւրքիան բնակելի դարձնել, իր կայսեր յառաջիկայ ուղեւորութիւնը մեզի համար ալ նոր թուականի մը բացուած պիտի ըլլայ :

* *

Ալպանիոյ մէջ կրակը նորէն մոխրուած կ'երենայ, բայց շատ ուշագրաւ է Բեդրպուրիէն «Տէյի թէլէկրաֆ»ի ուղղուած հեռագիր մը որ կ'իմացնէ թէ թիւրքիա ուս կառավարութեան զիմած է, հասկնալու համար թէ Ռուսիայէն ինչ օգնութիւն կրնայ յուսալ եթէ Մակեդոնիոյ ինքիւրը նորէն ծագի, ինչպէս կը վախցուի : Դուրը կը վախնայ թէ Աւստրիա պատրաստ է ապստամբութիւն մը յարուցանելու Մակեդոնիոյ մէջ եւ յետոյ գրաւելու զայն, եւ Պուլկարիա ու Յունաստան ալ իրենց զերը ունին խաղաղիւր այս գործին մէջ :

Եւ մէնի մէջ ապստամբութիւնը յաղթական կը շարունակէ : Վերջին լուրը ան է թէ ապստամբները զրաւած են Եւմէնի մայրաքաղաքը :

Լ. ՉԱՐԹՈՒՄԵԱՆ

ԼՈՒՐԵՐ

Հիտիսային Հեռագրական գործակալութիւնը Կ. Պոլսէն կը հեռագրէ ուս թերթերուն թէ սուլթանը հրամայել է ջնջել Կիլիկիոյ նոր կաթողիկոսական ընտրութեան համար դատական եւ կրօնական գործերու նախարարութեան տուած որոշումները, եւ նոր ընտրութիւնը կատարել ըստ վաղեմի սովորութեան :

Այս լուրը զեռ չհաստատուեցաւ ուրիշ աղբիւրէ : — Կիլիկիոյ զանազան բանտարկեալները — որոնք Կիլիկիոյ փոխադրուած էին զատուելու համար — ազատ արձակուեցան վերջերս : Վերջին պահուն կը անդեկանանք թէ Կիլիկիոյ մէջ ալ ազատ արձակուած են մէկ քանի հօգի որոնք տարիներէ ի վեր բանտը կը մնային :

— «Պուրկաներ» շոգենաւը, որ Ամբրիկայէն Ֆրանսա եկած ասենը ընդհարման մը հետեւանքով ընկզմեցաւ, երկար ասեն հառաչանքով մը պիտի յիշուի մէկ քանի հայ ընտանիքներու մէջ : Կորուածներուն ցանկին մէջ կը գտնենք տառը Հայու անունը, Սիմոն Տիմոնիքեան, Կ. Սարգիս, Թէլէքէլեան, Պատ. Ստեփանեան, կիւր և երեք զուակները, Ստեփան Քաղաճեան եւ Տուրեան : Աւելի կամ նուազ երկար պանդխտութիւնէ մը ետքը, հայրենիք զարձակներ էին ասոնք, զոր գուցէ թողած էին՝ մահուոնէ ազատելու համար : Ու, մարդերէն յետոյ, Գիւլուածին ալ այսպէս անգլթօրէն մեր եղբայրները հալածելը՝ տիրութեամբ կը համակէ մեզ :

— Կը ծանուցուի թէ Դոմնը վերջապէս հնաւանդ է Կովկասի 40000 հայ զաղթականներուն զարձին :

ՀԱՍՅԷ ՈՒ ԲԱԺՆԵԳԻՆ

ՆՈՐ ԿԵԱՆԻՒ ՎԵՐԱԵՐԵԿԱԿ ՆԱԺԱԿ ՈՒ ԲԱԺՆԵԳԻՆ ՂՐԿԻԿ ԵՍ

L. FRANK,
309, LADBROKE GROVE,
(ENGLAND). LONDON, W.

ՆՈՐ ԿԵԱՆԻՒ կը հրատարակուի ամէն ամսու 1ին և 15ին : Բաժնեդիրն է Եւրոպայի համար տարեկան 10 և վեցամսեայ 5 ֆրանք, Ամբրիկայի համար տարեկան 2 ու վեցամսեայ 1 տոլար :

ՆՈՐ ԿԵԱՆԻՒ ԱՌԱՋԻՆ և ՉՈՐՐՈՐԻ ԹԻՒՆԵՐԸ շատ քիչ օրինակ միայն ետ ստացած ըլլալով մեր բաժանորդներէն, զեռ չկրցանք զոհաջնել այդ թիւրքուն համար շատ կողմերէ մեզի ուղղուած խնդրանքները : Մեր բաժանորդներէն անոնք որ հաւաքածոյ կազմելու մաս զիր չեն, մեզ մեծապէս պարտաւոր պիտի թողուն եթէ հաճին այդ թիւրքուն զրկել մեզի :

